

491.33.02

Ա-50

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ք.

ԳՐԱԲԱՐԻ ԾԱՂԿԱՔԱՂ

Կազմեց
ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ



ՊԵՏԱԿԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1936

37260

Արքագրիչ Գառնիկ Տ. Սեփանյան

Պետրասի սպարան
Հրատարակ. № 3732
Գլավիիս Ա. 2118
Պատկեր № 628
Տիրամ 3000

A $\frac{\pi}{13518}$

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1.

Ե Ր Գ Վ Ա Հ Ա Գ Ն Ի

Երկնէր երկին և երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր.
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ:
Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աշկունքն էին արեգակունք:

Խոր. Ա. լա.

2.

Ե Ր Գ Վ Ա Ր Գ Գ Է Ս Ի

Հատուած դնացեալ վարդգէս մանուկն
Ի Տուհաց գաւառէն, զՔասախ գետով,
Եկեալ նստեալ զՇրէշ բլրով,
ԶԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով,
Կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի:

Խոր. Բ. կե.

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
 Որ չաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
 Ե՛կ հաւանեաց բանից
 Աշագեղոյ դստերս Ալանաց՝
 Տալ զպատանիդ:
 Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
 Զայլոց դիւցազանց զարմից
 Բառնալ զկենդանութիւն,
 Կամ ծառայեցուցանել
 Եւ ի սորկաց կարգի պահել.
 Եւ թշնամութիւն յաւիտենական
 Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:

Խոր. Բ. ծ.

Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս
 Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց,
 Ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց:

Խոր. Բ. ծ.

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի Սեաւն գեղեցիկ,
 Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
 Եւ անցեալ որպէս զարծուի սրաթե ընդ գետն,
 Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
 Ընկէց ի մէջ օրիորդին Ալանաց.
 Եւ շատ ցաւեցոյց զմէջ փափուկ օրիորդին,
 Արագ հասուցանելով ի բանակն իւր:

Խոր. Բ. ծ.

6.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն:

Խոր. Բ. ծ.

7.

Վիշապադունք դողացան դմանուկն Արտաւադդ,
Եւ դե փոխանակ եղին:

Խոր. Բ. կա.

8.

Տենչայ Սաթենիկ տիկին տենչանս՝
Ձարտախուր խաւարտ և դտից խաւարծի՝
Ի բարձիցն Արգաւանայ:

Խոր. Ա. 1.

9.

Ճաշ գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի,
Խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց:

Խոր. Ա. 1.

10.

Արտաւադդայ ոչ գտեալ,
Քաջի որդւոյն Արտաշիսի,
Տեղի ապաքանից՝
Ի հիմնանալն Արտաշատու,
Նա անց գնաց և շինեաց
Ի մէջ Մարաց զՄարակերտ:

Խոր. Ա. Բ.

11.

Մինչ դու գնացեր,
Եւ գերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակացս որպէ՞ս թաղաւորեմ:

Խոր. Բ. կա.

12.

Դու յորս հեծցիս յաղատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կացին քաջք,
Տարցին յաղատն ի վեր ի Մասիս,
Անդ կացցես և զլոյս մի տեսցես:

Խոր. Բ. կա.

13.

Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ դառաւօտն Նաւասարդի,
Զվաղելն եղանց և զվազելն եղջերուաց.
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք:

Մագ. 19.

14.

Իբրեւ զսէգն Տրդատ, որ սիգալովն
Աւերեաց զթումբս գետոց և ցամաքեցոյց,
Իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց:

Ագաթ. § 123.

15.

Թէ քո Շարայի որդորն է,
Մեր Շիրակայ ամբարքն չեն:

Խոր. Ա. ժբ.

ՈՍԿԵԴԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ

1.

ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ ՈՐԴԻՈՅ ԴԱԻԹԻ՝
ԹԱԳԱՒՈՐԻ ԻՍՐԱՅԵԼԻ

Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զդարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ և ուղղել զիրաւունս: Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս և զհանճար: Որոց իբրև լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի: Իսկ որ հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստացի, ի միտ առցէ զառակս և զբանս խորինս, զճառս իմաստնոց և զառակս նոցա: Մկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն, հանճար բարի ամենեցուն որ առնեն զնա. պաշտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգօնութեան. զիմաստութիւն և զխրատ ամբարիշտք անգոսնեն: Լճւր, որդեակ, խրատու հօր քո և մի մերժեր զօրէնս մօր քո, զի պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո և մանեակ ոսկի ի պարանոցի քում:

Առակ և. 1—9

2.

ՈՐՄԻՋԴ ԵՒ ԱՐՀՄՆ

Մինչ չև բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարածք՝ որ յերկինս կամ յերկրի, Զբուան

ոմն անուան էր, որ թարգմանի բախտ կամ փառք: Ջհադար
 ամ յաշտ արար, զի թերևս որդի մի լինիցի նմա, որում
 անուան Որմիզդ, որ զերկինս և զերկիր և զամենայն որ ի
 նոսա՝ առնիցէ, և յետ հադար ամի յաշտ առնելոյ՝ սկսաւ
 ածել զմտաւ, ասէ. Օգոստ ինչ իցէ յաշտս զոր առնեմ, և
 լինիցի ինձ որդի Որմիզդ, եթէ ի գուր ինչ ջանայցեմ:
 Եւ մինչ դեռ նա զայս խորհէր, Որմիզդ և Արհմն յղեցան
 յարդանդի մօր իւրեանց. Որմիզդն ի յաշտն առնելոյ, և
 Արհմն ի յերկուանալոյ անտի: Ապա իմացեալ Ջրուանայ,
 ասէ. Երկու որդիք են յորովայնի անդ. որ ոք ի նոցանէ
 վաղ առ իս հասցէ՝ զնա թագաւոր արարից: Եւ ծանուցեալ
 Որմիզդի զխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արհմենին. ասէ.
 Ջրուան հայր մեր խորհեցաւ՝ թէ ոք ի մէնջ վաղ առ նա
 երթիցէ, զնա թագաւորեցուցէ: Եւ զայն լուեալ Արհմենին՝
 ծակեաց զորովայնն, և ել եկաց առաջի հօրն: Եւ տեսեալ
 զնա Ջրուանայ, ոչ զիտաց եթէ ոք իցէ. և հարցանէր՝
 եթէ ով ես դու: Եւ նա ասէ. Ես եմ որդին քո: Ասէ ցնա
 Ջրուան. իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու
 խաւարին և ժանդահոտ ես: Եւ մինչդեռ նոքա զայս քնդ
 րիմեանս խօսէին, ծնեալ Որմիզդի ի ժամու իւրում լուսաւոր
 և անուշահոտ, եկն եկաց առաջի Ջրուանայ: Եւ տեսեալ
 զնա Ջրուանայ, զիտաց՝ եթէ Որմիզդ որդի նորա է՝ վասն
 որոյ զյաշտն առնէր, և առեալ զբարամուսնն՝ զոր ի ձեռին
 իւրում ունէր, որովք զյաշտն առնէր, ետ ցՈրմիզդ, ասէ.
 Յայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմհետէ դու վասն իմ
 առնիցես: Եւ ի տալ Ջրուանայ զբարամուսնն ցՈրմիզդ և
 օրհնել զնա, մատուցեալ Արհմենի առաջի Ջրուանայ՝ ասէ
 ցնա. Ո՛չ այսպէս ուխտեցեր՝ թէ ոք յերկուց որդւոցն
 իմոց յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից: Եւ
 Ջրուանն առ ի չջրելոյ գուխտն՝ ասէ ցԱրհմնն. Ա՛յ սուտ և
 չարագործ, տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հադար
 ամի, և զՈրմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ, և յետ
 ինն հադար ամի Որմիզդ թագաւորեացէ, և զինչ կամիցի
 առնել՝ արասցէ:

Յայնժամ սկսան Որմիզդ և Արհմնն առնել արարածս.
և ամենայն ինչ՝ զոր Որմիզդն առնէր, բարի էր և ուղիղ.
և զոր ինչ Արհմնն գործէր, չար էր և թիւր:

Եզնիկ Բ. ւ.

3.

ՅԱՂԱԳՍ ՅՈՀԱՆՆՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՎԱՐՈՒՅ ՆՈՐԱ

Այլ Յոհանն եպիսկոպոս, որդի Փառինայ հայրապետի,
հինաւորաց, թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս: Եւ էր
սա այր կեղծաւոր, և երեցունցանէր ինքն զանձն իւր
մարդկան պահող և խորգահանդերձ. մինչ զի մոյգս անգամ
ոչ ազանէր. այլ դամառն հեակով պատէր և զձմեռն կեմով:
Եւ յագահութեան առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր
տալ զագահութիւն իւր ընդ երկիւղին Աստուծոյ. այնչափ
ինչ, զի զիրս անարժանս և չհաւատալիս գործէր:

Զի էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն, զի
նստէր նա ի գրաստութեան վերայ և գայր. եկ[ն] դիպեցաւ սմա
օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր
ընդ մէջ, թուր զգօտւոյ, աղեղնակապարճ զմիջովն, լուացեալ
զհերս իւր, օծեալ, մերձեալ, վարսակալ եղեալ ի գլուխ իւր,
և [լ]օղիկ արկեալ զուսովք իւր. և գայր զճանապարհս իւր,
թերևս յաւաղակութենէ: Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ
հասակաւ, և էր գունաւոր, գնացող, մինչ զի ի բացէ
տեսանէր եպիսկոպոսն Յոհանն զձին, մեծապէս զարմացեալ՝
ակնկառոյց լինէր: Ապա իբրև եկն մերձեցաւ հեծեալն մօտ
ի նա անդր, ապա սպասեալ Յոհաննուն՝ բռնն հարկանէր
զերասանակաց ձիոյն և ասէր. է՛ջ դու վաղվաղակի ի ձիոյ
այտի, զի բանք են ինձ ընդ քեզ: — Ասէ այրն. Զի ոչ դու
զիս գիտես և ոչ ես քեզ, զինչ այն բանք իցեն, զոր դու
ընդ իս իցես խօսելոյ: Մանաւանդ զի այրն արբեալ ևս
դիպեցաւ, և շատ լամառեաց այրն իջանել ի ձիոյն: Ապա

բռնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ձիոյ անտի և առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն: Եւ առնն խոնարհել հրամայէր և ասէր. Չերիցութեան ձեռն դնեմ ի վերայ քո: Իսկ նա տայր պատասխանի զանձնէն, եթէ այր աւաղակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց. և այժմ դեռ ի նմին գործ կամ: Եւ շատ ի վէգ եկեալ յամառէր այրն, և նա և՛ս չար քան զնա: Ապա բռնարար զգետնեալ զայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. և յարուցեալ հրամայէր յուծանել զհանգոյցս մեկնոցին և արկանել նմա աղարողոն: Եւ ասէր. Ե՛րթ ի գեղ քո և լիջիր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես: Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ՛ գեղջէ իցէ: Ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն և ասէր. Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ: Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն, չառնոյր յանձն տալ: Ապա բռնարար յինքն հանեալ զձին, և զայրն արձակեաց: Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն:

Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղերողոն արկեալ, զնայր ի տուն իւր. և երթեալ մտանէր ի մէջ ընտանեաց իւրոց. ասէ ցկին իւր և ցընտանիս. Արի՛ք յաղօթս կամք: Եւ նոքա ասեն. Մոլի՛ս դու, դե՞ ուրեմն հարաւ ի քեզ: Իսկ նա ասէ. Արի՛ք կամք յաղօթս, վասն զի երէց եմ: Իսկ նոքա զարմացեալ, մերթ շիկնէին, մերթ ծիծաղէին, մինչև բազում անգամ յամառեալք, ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա: Ապա ասէ կինն ցայրն իւր. Ո՞չ դու երախայ էիր և չէիր մկրտեալ: — Ասէ այրն ցկինն իւր. Ապշեցոյց, չետ ջիշել. և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս երէց արար, և զձին սանձաւ թամբաւ առ և անց: Եւ ասեն ցայրն ընտանիքն իւր. Յարիցես անդրէն զնասցես առ եպիսկոպոսն և ասասցես. Մկրտեալ չէի. զի՞ արարեր զիս երէց: Իսկ նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. Ես մկրտեալ չէի. զի՞ արարեր զիս երէց: Եւ ասէ Յոհան. Սափորով միով ջուր բերէք: Եւ առեալ զջուրն՝ էարկ զգլխով նորա և ասէ.

Ե՛րթ, մկրտեցի զքեզ: Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ:

Բուգ. Զ. Բ.

4.

ՅԱՂԱԳՍ ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆՈՒ

Երբեմն սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն, և էր ժամանակն զայգիսն յատելոյ: Աղաղակէր առ նա այր մի յայգւոյն և ասէ. Օրհնեա, տէ՛ր եպիսկոպոս, զմեզ և զայգիսս: Ասէ Յոհան. Փուշ և տատասկ բուսցի: Ասէ այրն. Ի մարմինդ քո բուսցի փուշ և տատասկ, փոխանակ զի տարապարտուց անիծանեա զմեզ: Եւ եղեն նշանք յԱստուծոյ. զի իբրեւ չոգաւ եպիսկոպոսն ի վանս իւր, հասին հարուածք ի վերայ նորա, սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել: Եւ մեծապէս շտապեալ անկեալ ի տանջանս չարաչարս հարուածոց, և ի մեծ տագնապի կայր աւուրս բազում: Ապա չղեաց կոչեաց առ ինքն զայգորդն, աղաչեաց զնա առնել ի վերայ նորա աղօթս, զի փրկեսցի նա ի ցաւոցն: Այգորդն ասէր. Իսկ ես հով եմ, զի կարեմ զոք օրհնել կամ անիծանել. Թող թէ զայր եպիսկոպոս: Իսկ նա բռնադատէր զնա յայնժամ, մինչև յառնէր այգորդն, կայր յաղօթս և ասէր. Տէ՛ր Աստուած, դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ և անարժան. ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս. դո՛ւ փրկեա զիս յայս ի չարէս. զի ասեն թէ զայր եպիսկոպոս դու անիծեր, և ասեն՝ քո բանիւ եղև: Զի լաւ էր ինձ մահ. քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն: Եւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն, և սկսաւ չամենայն մարմնոցն փուշն ի բաց թափել. և էր իբրեւ զփուշ խոտոց. վաղվաղակի յարուցեալ ողջացաւ յախտէն:

Բուգ. Զ. Բ.

ՅԱՂԱԳՍ ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆՈՒ

Սոյն Յոհանն եպիսկոպոս, որդի Փառինայ, յորժամ երթայր առ թագաւորն Հայոց, խաղաղատակ լինէր նոցա. որպէս խաղալովն զանձն իւր կրթէր յազահութեան, որում ծարաւեալ պասքեալ փափաղէր. սակայն միահանեմ (միհանեմ?) այն էին նորա: Ի չորք անկեալ յոտս և ի ձեռս՝ սողէր առաջի թագաւորացն, և զուղտու զձայն ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փարելով: Ընդ կառաչելն ապա մի մի բան խառնելով առնէր ի ձայն կառաչելոյն, աւելով թէ Ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ. դիք ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ:

Իսկ թագաւորքն զմուրհակս գիւղաց կամ զազարակաց գրեալ և կնքեալ՝ դնէին ի վերայ ողինն Յոհաննու՝ փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեւղս և ազարակս և զանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն:

Այսպիսի էր այրս Յոհանն կապեալ չռչտութեան և չազահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործէր վասն ազահութեան, որ չէր արժան:

Բուգ. 9. ձ.

ՀԱՅԿ ԵՒ ՅԱԶՈՐԴԻՔ ՆՈՐԱ

Այս է Հայկն՝ որ ծնաւ զԱրամանեակ զորդի իւր ի Բաբելոն: Եւ ծնաւ Արամանեակ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Արամայիս: Եւ ծնաւ Արամայիս ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Ամասիա: Եւ ծնաւ Ամասիա ուստերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Գեղամ: Եւ ծնաւ Գեղամ ուստերս և դստերս

բազումս, յորոց անդրանիկն Հարմա: Եւ ծնաւ Հարմա ուս-
տերս և դստերս բազումս, յորոց անդրանիկն Արամ: Եւ
ծնաւ Արամ ուստերս և դստերս բազումս, յորոց անդրա-
նիկն Արայն գեղեցիկ:

Չուեաց խաղաց գնաց Հայկն ի Բաբելոնէ կնաւն և
որդւովքն և ամենայն աղխիւն հանդերձ: Եւ չոգաւ բնա-
կեցաւ յերկիրն Արարադայ, ի տանն որ ի լեռնոտինն, դոր
դառաջինն շինեալ էր Ջրուանայ հօրն՝ եղբարբքն հանդերձ:
Եւ ապա ետ դնա Հայկն կալուած ժառանգութեան Կադմեայ
թողին իւրում՝ որդւոյն Արամանեկայ: Եւ ինքն չուեաց
գնաց անտի ևս ի հիւսիսակողմն և չոգաւ բնակեցաւ ի
բարձրաւանդ դաշտավայրի միոջ. և կոչեցաւ անուն գաշ-
տին այնորիկ Հարք, յանուն հարցն, իսկ երկիրն ըստ
նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են հայազամբք
հանդերձ:

Եւ արդ՝ այս Հայկ հզօր զօրութեամբ և բարի ան-
ձամբ և կորովի աղեղամբ և մարտիկ յոյժ:

Յայնմ ժամանակի թագաւորեաց ի Բաբելոն որսորդ
հսկայ Բէլն Տիտանեան, ճոխն չաստուածացեալ, ուրջ հզօր
զօրութեամբ և սաստիկ յոյժ գեղ պարանոցի իւրոյ: Եւ էր
իշխան ամենայն աղգաց, որ սփռեցան ի վերայ երեսաց
ամենայն երկրի: Որոյ արարեալ առ աշօք կախարդութեամբ
հնարս և հրամանս թագաւորականս ամենայն աղգաց. և
հպարտութեամբ ամբարտաւանութեան իւրոյ կանգնեաց
ղպատկերն իւր, և ետ երկիրպագանել իբրեւ աստուծոյ և
զոհս մատուցանել:

Եւ վաղվաղակի կատարէին ամենայն աղգքն զհրամանս
նորա:

Բայց մի ոմն Հայկ անուն, նահապետ աղգացն, ոչ
հնազանդեցաւ ի ծառայութիւն նորա, և ոչ կանգնէր ի տան
իւրում զպատկեր նորա, և ոչ մեծարէր գնա աստուած-
րէն շքով:

Եւ էր անուն նորա Հայկ, ընդ որում ծնաւ արքային

Բելայ ոխութիւն մեծ: Եւ զօրաժողով լինի Բէլ արքայի
Բարեւոն և դիմէ զնայի ի վերայ Հայկայ՝ սպանանել զնա:

Գայ հասանէ յերկիրն Արարադայ, ի տունն, որ էր
նոցա հայրենի, որ շինեալն էր ի լեռնոտին. և կադմոս
փախստական զնաց ի Հարք, առ հայր իւր, ազդ անել
նմա, և ասէ. Դիմեալ գայ Բէլ արքայի ի վերայ քո, և եկն
եհա մինչև ի տուն անդր, և ես կնաւ իմով և որդւովք
ահաւասիկ կամ փախստական:

Առնու Հայկն զԱրամենակ և զկադմոս զորդի իւր, և
զորդիս նոցա և զորդիս եւթանեցունց դասերաց իւրոց,
արս հսկայս և նուազունս թուով: Եւ ի դիմի հարկանի
Բելայ արքայի. և ոչ կարաց զդէմ ունել բազմութեան
արանց հսկայից սպառազինաց: Եւ կամեցաւ ըմբռնել զնա
Բէլ ի բռնն իւր: Սոյս ետ Հայկն յերեսաց նորա և զնայր
նա փախստական. և Բէլ զհետ նորա երթայր պնդագոյնս
հանդերձ զինակրաւն իւրով:

Զտեղի կալաւ Հայկն և ասէ ցնա. Զի՞ պնդեալ դաս
զհետ իմ. դարձի՞ր անդրէն ի տեղի քո, զի մի մեռանիցիս
այսօր ի ձեռաց իմոց, քանզի ոչ վրիպի նետ իմ իւրիք:

Պատասխանի ետ Բէլ և ասէ.— Վասն այնորիկ զի մի
անկցիս ի ձեռս մանկուոյ իմոյ և մեռանիցիս, այլ եկ ի
ձեռս իմ և կեանց ի տան իմում խաղաղութեամբ, ունելով
ի գործս զմանկունս ի Տան իմոյ զորսականս:

Պատասխանի ետ նմա Հայկն և ասէ. Շնն ես դու և
յերամակէ շանց, դո՛ւ և ժողովուրդ քո: Եւ վասն այնորիկ
թափեցից իսկ այսօր ի քեզ զկապարճս իմ:

Եւ արքայն Տիտանեան սպառազինեալ և վստահացեալ
ի կռու սպառազինութիւն անձին իւրոյ:

Եւ Հայկն Արեթայն մերձենայր և ունէր ի ձեռին
իւրում զաղեղն, որպէս հեծան հզօր մալրափայտեայ: Եւ
Հայկին զտեղի կալեալ՝ պատրաստի ընդդէմ նորա աղե-
ղամբ: Եւ կանգնէ զկապարճսն ի գետնոյ ընդ ինքեան յա-
ղեղն սկայօրէն կամարին, և ընդ գիրկս մտեալ զօրու-
թեամբ հարկանէ նետիւ զտախտակս երկաթիս, և ընդ

պղնձի վահանն ի թափ անցուցանէ ընդ մսեղէն արձանն,
երկիր խաբսխեալ վտարեալ զնետն. և վաղվաղակի յեր-
կիր կործանեալ աստուածակարծեալ հսկայն. և զօրք նորա
փախստական լինէին: Եւ նոքա զհետ մտեալ թափեցին ի
նոցանէ երամակս ձիոց և ջորեաց և ուղտուց:

Եւ Հայկ դարձաւ ի տեղի իւր. և չոգաւ կալաւ Հայկն
զերկիրն Արարադայ, և բնակեցաւ անդէն ազգաւ իւրով
մինչև ցայժմ:

Եւ ի ժամանակի մահուան իւրոյ ետ զնա կալուած
ժառանգութեան Կադմեայ թողին իւրում, որդւոյ Արամա-
նեկայ, եղբօր Արամայիսի: Եւ Արամանեկայ հրամայեաց
երթալ ի հիւսիսակողմն, ուր ինքն իսկ դադարեաց դառա-
ջինն:

Եւ եղև յետ մահուանն Հայկայ, առ Արամենակ զոր-
դիս իւր և զդստերս իւր և զարս նոցա, և զքորս եւթա-
նեսին և զարս նոցա, զուստերս և զդստերս նոցա և զամե-
նայն աղիս իւր: Եւ չոգաւ բնակեցաւ անդէն յառաջնումն
գաւառին, զոր կոչեցին յանուն հարց իւրեանց՝ Հարք:

Ապա գնայ անտի ևս Արամանեակ ի հիւսիսակողմն և
երթեալ իջանէ յերկիր մի խորին դաշտավայր, որ կայ ի
մէջ բարձրաբերձ լեռանց, և հատանէ անցանէ ընդ մէջ
նորա գետ յորդահոսան, զորով անցեալ Արամենակ բնակէ
անդ, և շինէ զերկիրն կալուած ժառանգութեան իւրոյ՝
զվայրն լեռնակողմն և դառապար:

Ջկնի Արամանեկայ՝ որդի նորա Արամայիս շինէ իւր
ի վերայ գետեղերն տուն բնակութեան, և անուանէ դա-
նուն նորա՝ ըստ անուան իւրոյ Արամայիւր: Եւ որդիք նո-
րա սկսան բազմանալ և լնուլ զերկիրն: Եւ շինեցին դա-
ւառս:

Մեռաւ և Արամայիս և կալաւ զերկիրն որդի նորա
Ամասիա: Եւ ապա յետ նորա Գեղամ: Մեռաւ Գեղամ և
տիրեաց որդի նորա Հարմայ, ապա որդի նորա Արամ,
ապա որդի նորա Արայն գեղեցիկ, որով անուն իսկ դաշ-
տին այնորիկ կոչեցաւ Այրարադ:

Եւ Շամիրամ կինն Սաորւոց արքային Նինոսի, քան-
զի լուաւ վասն գեղեցկութեան նորա և կամեցաւ առնել
ընդ նմա բարեկամութիւն, որպէս զի կատարեսցէ զկամս
նորա պոռնկութեամբ. քանզի ըստ լրոյ համբաւոյ յոյժ
տուփեալ էր ի վերայ անձին և գեղոյ նորա գեղեցկութեանն:
Զի ոչ գտանէր յայնմ ժամանակի նման նորա այր ոք ամե-
նեին՝ այր պատկերաճոխ: Յդէ առ նա հրեշտակս պատա-
րագօք և կոչէ զնա առ ինքն ի Նինուէ: Իսկ Արայն ոչ
զպատարագն նորա ընկալաւ և ոչ յանձն առնու երթալ ի
Նինուէ առ Շամիրամ:

Ապա առնու զգօրսն իւր Շամիրամ և զնայ ի վերայ
նորա ի Հայս: Գայ հասանէ ի դաշտն Արայի և տայ պա-
տերազմ ընդ Արայի, հարկանէ զգօրն և սպանանէ զԱրայ
ի պատերազմին:

Եւ հրամայէ Շամիրամ տանել զդի նորա ի վերնա-
տունն ապարանից իւրոց և առէ. Ես ասացից աստուածոց
լիզուլ զվերս նորա և կենդանասցի:

Իսկ իբրև նեխեցաւ զի նորա ի վերնատանն, հրա-
մայեաց գաղտնի ընկենուլ ի վիհ և ծածկել: Եւ զարդարէ
զմի զոմն ի հոմանեաց իւրոց այր պատշաճող, և համբաւ
հանէ զԱրայէ լիզուլ աստուածոցն և յարուցանել: Ունի ի
ծածուկ, և ոչ ումեք ի ծանօթից նորա ցուցանէ զնա, և
այնպէս հանէ համբաւ Արալեղաց տիկինն Շամիրամ:

Յայնժամ տիրեաց Շամիրամ ի վերայ երկրին Հայ-
աստանեայց, և յայնմհետէ Սաորեստանեայց թագաւորքն
տիրեցին մինչև ցմեռանելն Սենեքարիմայ:

Անանուն պատմիչ, էջ 2—6.

7.

ԳՆԷԼ ԵՒ ՓԱՌԱՆՁԵՄ

Զայնու ժամանակաւ էր գուստր մի գեղեցիկ Անդով-
կայ ուրումն, մի ի նախարարացն նահապետին Սիւնեաց,

որում անունն Փառանձեմ կոչէր, դորմէ կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և պարկեշտութեամբ: Ապա Գնէլ պատանեակն՝ եղբորորդին արքային էառ զնա ի կնութիւն իւր: Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նորա յաճախեալ բազմանայր և հնչէր: Ապա առ համբաւ ցանկութեան անուանն տրփեալ լինէր միւս ևս հօրեղբորորդին Գնելոյ, որում անունն Տիրիթ կոչէր: Վասն որոյ անկանէր ի գաղտագողօնս, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ: Եւ յորժամ կարացն տեսնեանն՝ որում ցանկայր, այնուհետեւ հնարս խնդրէր առն կնոջն կորստեան. ո՞ր գիտէ, զկին նորա նմա հնար լիցի յափշտակել:

Ապա Տիրիթն ի հնարս նենգութեան մտանէր, և բազում վարձէր իւր օգնականս և սատարս, որով զիւր չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ: Եւ քսիս ստութեան զԳնելոյն նենգութեամբ առ թագաւորն Արշակ մատուցանէր, թէ Գնէլ թագաւորել կամի և զքեզ սպանանել. և ամենայն մեծամեծք և նախարարք և աղառք սիրեն զԳնէլ և ամենայն աշխարհիս նախարարք կամին զտէրութիւնն նորա ի վերայ իւրեանց առաւել քան զքո: Արդ, ասեն, գիտեա՞նք և տես, արքայ, զինչ գործեսցես. որպէս և կամիս, զիարդ մարթացիս ապրել: Եւ այսպիսի բանիւք գրդուէին զթագաւորն Արշակ, մինչև հաստատէին ի միտս թագաւորին զիւրեանց ասացեալսն:

Ապա ռխացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ, և բազում անգամ հալածական առնէր զնա. և նիւթեալ լինէր նենգութիւնն բազում ժամանակս: Ապա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ, կոչել առ ինքն զպատանեակն Գնել և սպանանել: Ապա առաքէր զՎարդան գեղբայր սպարապետին զնահապետ աղգին մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութեամբ կոչել կարասցէ. զի մի խորհուրդն յայտնեցի. գուցէ փախիցէ և ապրիցի. այլ զի պատրանօք և հրապուրանօք ամիցէ մինչև ի տեղին մահուն: Եւ էր բանակ թա-

գաւորին ի Շահապիվանի ի բուն բանակի տեղսն Արշա-
կունեացն ի ներքոյ սիւսեացն և ի վերայ ասպարիսացն:
Եւ առաքեալ զՎարդանն, զմեծ նահապետն յարքայէն Ար-
շակայ, եկն եղիտ զպատանեակն Գնել ի մօտաւոր տեղ-
ւոջն, այս ինքն ի գեւղն Առաւիւտոց անուանեալ: Մեծաւ
ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակն Գնել հան-
դերձ իւրով կնաւն և զրամբն հաւանեցուցանէր երթալ հա-
սանել ի բանակն արքունի, իբրև այն թէ ի մեծարանս
ինչ գնա կոչիցէ թագաւորն, բազում խնդանօք տարեալ
հասուցանէր, եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ զտօնս
Նաւասարդաց առանց քո անցուցանել, զի հաճեալ և քաղցրա-
ցեալ է ընդ քեզ. վասն զի ըստ բանից չարախօսացն ոչ
ինչ գտաւ ի քեզ չարութիւն. և եհաա ինքն ի վերայ, զի
զուր ցայժմ ատէր զքեզ, որ ի նմանէն մեծ սիրոյ ար-
ժանի ես:

Ապա չուեաց ամենայն կաղմութեամբն իւրով Գնել,
երթեալ հասանէր ի բանակն արքունի զգիշերն ամենայն
բազում փութով տագնապաւ: Վասն զի վաղիւն հասելոյ
առաւօտուն օրն լուսանայր կիւրակէն:

Իսկ իբրև առաւօտն ծագեաց, հասանէր վաշտն Գնե-
լոյ ի բանակն արքունի, և մինչ Գնելն արքունական բա-
նակին լինէր միջամուխ, ազդ լինէր թագաւորին եկն նո-
րա: Ապա ելանէր հրաման յարքունուստ, արտաքս ունել
և տանել սպանանել: Եւ մինչդեռ գայր նա ընդ բանակա-
մէջն, և էր հեծեալ չերիվարին իւրում, իբրև մերձ եղև ի
հրապարակն արքունի, և անդ ի յարքունուստ հասանէին
բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք
վաղրաւորք սակրաւորք սունաւորք և սպարակիրք հետե-
ւակք, որք մատուցեալք բուն հարեալք ընկենուին յե-
րիվարէ անտի զպատանեակն Գնել, և ձեռն յետս կապէին
գնա, և առեալ գնացին ի տեղի կառափելոյն:

Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուարաւ,
ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում, իսկ իբրև
տեսանէր թէ կալան գայր իւր և կապեցին, վաղվաղակի

ընթացաւ յեկեղեցախորանն... հասեալ առ արքեպիսկոպոս-
տապետն (Ներսէս), դոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տա-
րապարտ կորուստն, ճշեալ մեծաձայն. Վնդ հասիր, ասէ,
դեռ զամուսինն իմ զուր առանց փասու և յանցանաց
խողխողեն: Իսկ նորա խափանեալ զպաշտօնն, ընթանայր
ի խորանն արքունի, հասեալ ի դրացն ի ներքս, առ թա-
գաւորն անկանէր: Իսկ թագաւորն իբրև տեսանէր զմեծ
քահանայապետն, գիտացեալ զբարեխօսութիւն համողելոյն
վասն առնն մահուանն զի մի մեռցի, յայնժամ թագաւորն
զիւր սամոյրսն զգլխովն ածեալ, ի փոյթկնջանն մտեալ,
զիւր դէմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեալ, զի
զնորա բանսն մի լուիցէ:

Իսկ զպատանեակն Գնել առնուին գնային մօտ ի
սիւսն արքունի, և անդէն կառափէին ի սարակ լերինն,
որում տեղւոյն Լսին անուանեալ է, մօտ յորմածս արգե-
լոցացն որսոյն երէոցն, ընդդէմ մուրտաստանին աղբերացն
բազմոցացն արքունի, չանդիման բանակետեղ բնին:

Ապա հրաման եղև յարքայէն, Ամենայն մարդիկն որ
իցեն ի բանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի ոք իշ-
խեսցէ չերթալ. այլ ամենայն ոք առ հասարակ երթիցեն
դիցեն աշխար կոծոց, և լացցեն զԳնել մեծ սեպուհն արշա-
կունի զսպանեալն: Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լա-
լիսն, նստեալ լայր զեղբօրորդին իւր, զոր ինքն եսպան:
Երթեալ նստէր մօտ առ դին, լայր ինքն, և տայր հրաման՝
կոծ մեծ և աշխար դնել շուրջ զսպանելով դիակամբն: Իսկ
կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձսն պատառեալ,
զգէսս արձակեալ, մեղակաթ ի մէջ աշխարանին կոծէր.
ձայն արկանելով ճշէր, յողբս արտասուաց չաղիողորմ դու-
ժի առ հասարակ զամենեւեան լացուցանէր: Իսկ թագա-
ւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկինն սպանելոյն, տուիէր
և ակն դնէր՝ առնուլ զնա իւր կնութեան:

Իսկ այն որ զնենգութիւն քսութեանց նիւթեաց, և
դաւով ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս կատա-
րեաց, վասն նորին կնոջն արար զայն, զի մեծապէս սիրով

հարեալ էր ի նմա: ՁՏիրիթն ասեմ, որ յառաջագոյն հա-
րեալ ի կնոջն յայնմիկ, վասն որոյ զնենդութիւնս սպա-
նութեանցն թագաւորաւն գործեաց: Իսկ մինչդեռ ի նմին
կոծն սաստկացեալ էր, Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ
տուփանացն: Պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ՛ զի մի
կարի զանձն քո աշխատ առնելու աչդչափ, զի այր բարի ես
եմ քան զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի
զնա ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեան: Արդ մինչդեռ
կոծ մոլութեան զդիակամբն ջայլէին, զայսպիսի պատգամս
առաքէր Տիրիթն: Բողոք բառնայր՝ թէ լուարուք ամե-
նեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև. զի որ ինձ ակն
եղ, վասն իմ զայրն իմ ետ սպանանել: Ձհերն փետէր,
ճշէր ընդ կոծելն:

Ապա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան ի լսե-
լիս ամենեցուն և ի ձայնարկելն ամենայն, եղև նա մայր
ողբոցն, և ձայնարկուքն ամենայն ի ձայն ողբոցն սկսան
նուագել զիրան տրփանացն Տիրիթայ, զակն զնելն, զքսու-
թիւնն, զհնարս մահու նիւթել, զսպանումն, ձայնիւքն
մրմնջոցն ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարբառէին
գեղգեղեալ խանդադատութեամբ: Ի նուաճել իւրեանց ձայ-
նիցն, իրքն յայտնեալ հռչակ հարկանի: Չոր իբրև լուա-
թագաւորն Արշակ, և եհաս ի վերայ իրացն, զարմացեալ
լինէր արմանայր ընդարմանայր, ստըջացեալ ի միտ առ-
նոյր զիրան: Ապա խօսել սկսանէր թագաւորն, ծափս զծա-
փի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրան՝ զոր գործեաց, ասէ-
վասն զի ի կնոջն Գնելոյ անարժան սիրով հարաւ Տիրիթն,
առ այնմ զչարիսն նիւթեաց զքսութիւն, զմահուն գոռու-
թիւն զուր և տարապարտ, և զմեզ ևս արդար արեանն շա-
ղախեաց վասն իւրոյ պղծութեանն. զեղբայրն իւր ետ կո-
րուտանել, և զանհնարին չարիսն և զանէծս՝ որ ոչ անցա-
նեն, ետ մեզ ժառանգել:

Ապա իբրև հասանէր թագաւորն յիրացն հաստատու-
թեան ի վերայ, և ճշգրտէր զիրան, խլիխեալ անսայր բա-
նին առ ժամանակ մի: Իսկ իբրև զմեռեալն ծածկեցին ան-

քէն ի տեղւոջն, յորում սպանաւն, և աւուրք հարուստ ան-
 ցին ի վերայ իրացն գործելոց, պատգամ յղէր Տիրիթն առ
 թագաւորն. կամ լիցի, ասէ, քեզ արքայի, զի հրաման տա-
 ցես՝ զՓառանձեմ կին Գնելոյ թող առից ինձ կնութեան:
 Զոր իբրեւ լուեալ արքային, ասէ. Արդ հաստատ գիտեմ զոր
 լուայն թէ ստոյգ է. վասն կնոջն իւրոյ եղև մահն Գնելոյ:
 Եւ անդէն արքայն մահ խորհէր, սպանանել զՏիրիթ ևս
 փոխանակ ընդ մահուն Գնելոյ: Զոր իբրեւ լուաւ Տիրիթ,
 զահի հարեալ յարքայէն, գիշերի փախստական լինէր: Ապա
 ազդ լինէր թագաւորին Արշակայ փախուստն Տիրիթայ.
 տայր հրաման թագաւորն Արշակ աղատագունդ բանակին
 զհետ լինել Տիրիթայն, զի իբրեւ հասցեն նմա, անդէն ի
 տեղւոջն սպանցեն: Բազումք և քաջք զհետ լինէին փա-
 խուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասանէին ի գաւառին
 Բասենոյ, ի մէջ մայրեացն, ի տեղւոջն՝ յորում հասանէին,
 անդէն զՏիրիթ սպանանէին:

Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկինն սպանելոյն
 զՓառանձեմն: Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն,
 նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ, ասելով թէ թաւ
 է մարմնով և թուխ է գունով: Ապա իբրեւ կինն ի նա ոչ
 չանգոյց զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ յերկիրն
 Յունաց և խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհ-
 մէն ազգաւ, զի անուն էր նորա Ողոմպի: Եւ ուժգին սիրով
 սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին
 կնոջն. և կինն Փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմպին և խնդրէր
 սպանանել զնա զեղովք: Իբրեւ ոչինչ հնարս մեքենայից
 չկարէր գտանել, վասնզի անձինն իւրում կարի զգոյշ
 կայր, մանաւանդ ի կերակրոց և յըմպելեաց, բայց զիւրոց
 նաժշտացն կերակուրս արարեալ և կամ զնոցին պարզեալ
 զգինի ճաշակէր. և եթէ ոչ ինչ գտանէին հնարք գեղել
 զնա մահուան զեղօքն. ապա դրան երէց ոմն արքունի՝ որ
 էր ի ժամանակին յայն, որում անուն Մըշիւնիկ, յԱրշա-
 ձունեաց տեղեացն, ի նահանգէն Տարօն գաւառէն, զնա ի
 բանս արկանէր Փառանձեմն անօրէնն: Ընդ տէրունական

Ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն օրի-
 նաց խառնէին զդեղն սատակման, երէցն Մըջիւնիկ անուն,
 տալով յեկեղեցւոջն Ողորմալիայ տիկնոջն ընծեռել զմահուն
 դործ և սպանանէր: Ըստ չարեացն կատարելոց զՓառան-
 ձեմայն ամենայն չարեօք լցեալ զկամս կատարէր և յանօ-
 րէնն Փառանձեմայն պարզե առեալ չերիցուն զդեւղն՝ ուստի
 ինքն էր, ի նահանգէն Տարօն գաւառէն, որում անուն
 Գոմկունք կոչին:

Բուգ. Դ. ձե.

8.

Վ Ա Ր Ք Մ Ա Շ Թ Ո Յ Ի

Առն՝ զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն
 որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշթոց անուն,
 ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն
 երանելոյ՝ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն
 վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գա-
 ւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ
 յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր
 հրամանին, առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝
 Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխար-
 հական կարգաց, ցանկալի եղեալ զինւորական արուեստին՝
 իւրոց զօրականացն, և անդէն ուշ եղեալ փութով ընթեր-
 ցուածոց աստուածեղէն դրոց, որով առ ժամայն լուսաւո-
 րեալ և թեամուխ միջամուխ յաստուածատուր հրամանացն
 հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զար-
 դարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն:

Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափուցն՝ ի
 ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկա-
 նայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն և անդէն
 վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր: Եւ գտեալ

ևս դոմանս՝ յինքն յարեցուցանէր, աշակերտեալ նմին սո-
վորական աւետարանութեան:

Առեալ այնուհետեւ երանելոյն զհաւատացեալս իւր,
դիմեալ իջանէր յանկարդ և յանդարման տեղիս Գողթան:
Վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ,
ձեռն արկանէր զդաւառովս, հանդերձ միամիտ սատարու-
թեամբ իշխանին. գերեալ զամենեւեան ի հայրենեաց
աւանդելոց, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորու-
թենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ, նոյնպէս
առաւել հոգ ի մտի արկանէր և ասէր հոգալով. «Տրամու-
թիւն է ինձ և անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց
իմոց և ազգականաց»:

Եւ այնպէս տրամական հոգովք պաշարեալ և թա-
կարդապատեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպի-
սի՞ արդեօք ելա իրացն գտանիցէ: Եւ իբրեւ աւուրս բա-
ղումս անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնուհետեւ հա-
սանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծայ, որոյ անունն
ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փու-
թոյ հաւանեալ: Եւ միանգամայն յօժարութեամբ դումա-
րեալ հանդերձ աղօթիւք մեծովք առ Աստուած կանխէին,
վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասա-
նելոյ, և զայն առնէին աւուրս բաղումս: Ապա ելանէր նո-
ցա պարգևական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշ-
խարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և զիրս նշա-
նագրոյ Հայաստան ազգին հասանել. բաղում հարց փորձի
և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բաղում աշ-
խատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխա-
դոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն
կոչէր Վռամշապուհ:

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն
ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչե-
ցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբետաց հայ-
երէն լեզուի [. . .]: Եւ իբրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն

գրելոյն ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել
վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն վահրիճ
անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հա-
րէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիս-
կոպոսի:

Իսկ Հարէլին զայն լուեալ, փութանակի հասանէր առ
Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանա-
գրոյն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յեր-
կիրն Հալոց, ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա՝
ի նա հասուցանէր: Իսկ արքային հանդերձ միաբան սրբոյն
Սահակաւ և Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հարէլէն,
ուրախ լինէին:

Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծա-
գիւտն, խնդրէին հայցէին ևս յարքայէ մանկունս մատաղս,
որով զնշանագիրսն մարթասցեն: Եւ յորժամ բազումք ի
նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն
ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետու-
թեան գեղեցիկ երանելին հասանէր, և իբրեւ ամս երկու
կարգեալ զվարդապետութիւն իւր, և նովին նշանագրովք
տանէր:

Իսկ իբրեւ ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշա-
նագիրքն՝ ողջ ածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզւոյն,
մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց
բաղեալք և յարուցեալք դիպեցան:

Յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս
դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ: Վասն
որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկաւոց՝ հրա-
մանաւ արքայի, և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և
հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր
զնայր ի հինգերորդ ամի վռամշապհոյ արքային Հալոց, և
երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս
Ասորոց, որոց առաջինն Եգեսիա կոչի, և երկրորդն Ամիդ
անուն: — Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջ-
նոյն Բաբելլաս անուն և երկրորդին Ակակիոս, հանդերձ

կղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահեալ, և բա-
զում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգարար-
ձուլթեամբ, ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի:

Իսկ աշակերտասէրն վարդապետին դտարեալսն ընդ
իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն
կարգէր, և զոմանս յունական դպրութիւնն, անտի ի Սա-
մուսատական քաղաքն գումարէր. և նորա իւրովք հաւա-
սարօք զսովորականն առաջի եղեալ դաղօթս և զտքնու-
թիւնս և զպաղատանս արտասուալից, զխստամբերութիւնս,
զհոգս զաշխարհահեծս, յիշելով զասացեալսն մարգարէին,
եթէ «Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես»:

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն
իւրոց ազգին բարեաց ինչ օձանս դտանելոյ: Որում պար-
գէր իսկ զիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական
չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջովս
իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի
նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիղորայիւք
և կապօք:

Եւ ասլա հրաժարեալ լեպիսկոպոսացն սրբոց, հան-
դերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամուսաց-
ւոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն
մեծարեալ լինէր: Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն
հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով զա-
մենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնրբագոյնսն, զկարճն
և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօ-
րինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն գառնալին հան-
դերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք, որոյ առաջ-
նոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեաց գաւառէն, և երկ-
րորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն: Եւ եղեալ
սկիզբն նախ Սուսկացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ
ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով
եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ գրանս
հանճարոյ»: Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հան-
դերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան:

Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին, և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց: Որ յորոց նախընկալն եղև, առաջի արկեալ նոցա զնշանապիրն աստուածատուր, վասն որոյ բազում իսկ զովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ և ի մխիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք: Յորոց թուղթս աւետազիրս հանդերձ շնորհատուր պարգևօքն և յամենայն իւրացիւքն, ի շնորհացն Աստուծոյ ճանապարհորդ լինէր, զօթեանօք անցեալ աջողութեամբ և հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր քաղաքին, ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց Մեծաց:

Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն, ազդ լինէր թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարազունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ, պատահէին երանելոյն՝ զափամբ Ռահ գետոյն: Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի և բարբառօք ցնծութեան և երգօք հոգևորօք և բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային, և դաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին: Եւ ի ձեռն առեալ այնուհետև աստուածագործ մշակութեամբ զքաւտարանական արուեստն՝ ի թարգմանել, ի դրել և յուսուցանել:

Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց, անպայման սքանչելի լինէր, յորում անկարծ ուրեմն օրէնստւոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և յառաջագէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան,

Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն: Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն

աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան, առժա-
մայն վաղվադակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լի-
նէր: Իսկ իբրեւ զչափ առեալ զիրացն հաստատութեան, և
համարձակագոյն և առաւելագոյն զաշակերտութիւնն նորա-
գիւտ վարդապետութեանն՝ խմբէին ուսուցանել և թեքել,
և պատրաստական քարոզութեանն անդէտ մարդկան յօրի-
նել. որոց և ինքեանք իսկ ի կողմանց և ի գաւառաց Հայ-
աստան աշխարհին յորդեալք և դրդեալք հասանէին ի բացեալ
աղբիւրն գիտութեանն Աստուծոյ: Քանզի ՅԱյրարատեան
գաւառին, ի կայս թագաւորացն և քահանայապետացն,
ըղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ:

Յետ այնորիկ առնուր հաւանութիւն երանելին Մաշ-
թոց և հրաժարեալ ի նոցանէն հանդերձ այլովք ևս օգնա-
կանօքն, որոց առաջնումն Տիրայր անուն ի Խորձենական
գաւառէն, և երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տարօնոյ,
հանդերձ այլովք ևս սպասաւորօք աւետարանին, զոր չեմք
բաւական ըստ անուանցն նշանակել, երթեալ իջանէր յա-
ռոստակն Գողթան, յառաջին դաստակերտն իւր: Եւ կար-
գէր յամենայն գիւղս գաւառին՝ դասս սրբոց վանականաց:

Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական
աշխարհն ելանէր, մինչև հասանել նմա բովանդակ ի վերայ
սահմանաց Սիւնեաց. և ժողովեալ մանկունս առաւել զգա-
ղանամիտ զվարենագոյն զճիւղադարարոյ կողմանցն, դայե-
կարար սնուցանել և խրատել, ապա և զերկիրն Սիւնեաց
դասուք վանականաց լնուր:

Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգ
ի մտի արկանէր և վասն բարբարոսական կողմանն. և առ-
նուր կարդեալ նշանագիրս վրացերէն լեզուին: Գրէր, կար-
գէր և օրինօք յարդարէր. և առնուր ընդ իւր զոմանս լա-
ւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ գնայր իջանել ի
կողմանս Վրաց. և երթեալ յանդիման լինէր թագաւորին,
որում անուն էր Բակուր, և եպիսկոպոսի աշխարհին՝ Մով-
սէս: Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր
յորդորելով. յորում և յանձն առեալ ամենեցուն զխնդրելին

կատարել: Եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին,
որ անուանեալ կոչէր Զաղայ, այր գրագէտ և ճշմարտա-
հաւատ. հրաման տայր այնուհետեւ արքայն վրաց՝ ի կող-
մանց կողմանց, և ի խառնադանջ զաւառաց իշխանութեան
իւրոյ՝ ժողովել մանկունս՝ տալ ի ձեռն վարդապետին:
Զոր առեալ արկանէր ի բովս վարդապետութեանն: Իսկ
իբրեւ ընդ ամենայն տեղիս վրաց կարգեալ զգործ աստուած-
պաշտութեանն, այնուհետեւ դառնայր յերկիրն Հայոց:

Ապա դարձեալ ելանէր շրջել զտեղեօք կարգելեօք և
զգաւառօքն աշակերտելովք աշխարհին Հայոց, զուարթա-
ցուցանել, նորոգել, հաստատել: Խորհուրդ առնոյր այնու-
հետեւ վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ
թագաւորին Հոռոմոց: Եւ փութացեալ գնայր հանդերձ աշա-
կերտօք բաղմօք, անցանել ի կողմանս Յունաց: Հասանէին
ի թագաւորակաց քաղաքն Կոստանդինական, զորմէ իսկոյն
պատմէին յարքունիսն. և մտեալ առաջի պատուական
աթոռոյն՝ յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն
և հաշրապետին: Եւ ապա ցուցեալ կաշսերն զպիտոյիցն
զհանգամանս և առեալ զանընդդիմակաց հրամանն հան-
դերձ սակերօք կաշսերազիր նշանակելովք՝ վասն մանկաւոյն
յաշակերտութիւնն, առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ:
Գալին հասանէին ի համադիր կողմանս, և անդէն վաղվա-
ղակի պատահեալ սպարապետին Հայոց, հանդերձ սակերօք
կաշսեր յանդիման լինէին: Եւ նորա առեալ սակերս կաշ-
սերական նշանօք, փութայր վաղվաղակի զհրամանն կա-
տարել. և հրեշտակս արձակեալ այնուհետեւ ի գաւառս կէս
ազգին Հայոց, յիշխանութեանն կաշսեր, բաղմութիւն ման-
կըսւոյ ժողովել:

Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց
աղուան ազգով, Բենիամէն անուն. և նորա հարցեալ և
քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին, առնէր
ապա նշանադիրս:

Յետ այնորիկ հրաժարեալ՝ բաղում աշակերտօք զայր
անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց. և հասեալ ի Նոր քա-

դաքն, յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ և
Թադաւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին:

Գաղարէր անդ աւուրս ինչ և ապա չեա այնորիկ հրա-
ժարեալ գնալ ի կողմանս Աղուանից. և երթեալ իջանէր
յաշխարհն. և հասեալ ի Թադաւորական տեղիսն, տեսանէր
զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կո-
չէին, և զնոցին Թադաւոր՝ որում Արսվաղ էր անուն: Ապա
հարցեալ ի նոցանէ, առաջի եղեալ վասն որոյ եկեալն էր:
Տային հրաման՝ ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեանն
իւրեանց, բաղմութիւն մանկանց՝ յարուեստ դպրութեանն
ածել:

Խաղացեալ գայր ի կողմանցն Աղուանից, անցանել
յաշխարհն Վրաց. և հանդէպ հասեալ գայր Գարդմանական
ձորոյն: Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից, որում
Խուրս կոչէին, առաջի դնէր զանձն վարդապետին, հան-
դերձ իշխանութեամբն իւրով. առաւելագոյն իսկ վայելեալ
ի հիւթ և ի պարարտութիւն վարդապետութեանն, չուղար-
կէ զերանելին՝ ուր և երթալոցն էր:

Իսկ նորա անցեալ դիմեալ ի կողմանսն, առ որով
ժամանակաւ Արծիւղ անուն Թադաւորեալ Վրաց, որոյ առա-
ւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապե-
տութիւնն. և նորա շրջեալ զամենայն աշակերտօք, պատ-
ուիրեալ կալ ի ճշմարտութեանն: Յայնժամ իշխանին Տաշ-
րացւոց՝ որ անուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա
զանձն ամենայն գաւառովն իւրով. և նորա ամենասփիւռ
վարդապետութիւնն ոչինչ պակասութեամբ քան զայլոցն
գաւառաց անցուցեալ, ինքն դառնայր ի կողմանս Հայոց
Մեծաց:

Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝
զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել և զիւրացու-
ցանել, ձեռն ի գործ արկանէր ի Թարգմանել և ի գրել
մեծն իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն: Որոց
դարձեալ զէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յու-
ղարկել ի կողմանս Ասորոց, ի քաղաքն Եդեսացւոց, զՅով-

սէփ և երկրորդն Եզնիկ անուն, յԱյրարատեան գաւառէն, ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս՝ հայերէն գրեալս դարձուցեն:

Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն և կատարեալ զհրամանսն, և առ սլատուական հարսն առաքեալ, անցեալ զնային ի կողմանս Յունաց, ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին: Յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն և բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք գացին երեւելով աշխարհին Հայոց, և առաջի գնէին հարցն զբերեալ կտակարանսն:

Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ [ի] յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ՝ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս, հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք, և շատ ևս մեկնութիւն գրոց թարգմանէին: Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ լընթերցուածս գրոց ծախէին հարքն՝ զտիւ և զգիշեր:

Ապա յետ դարձեալ՝ այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս կարգել և յօրինել, լի ամենայն ճաշակօք: Եւ այնպէս զամենայն կողմանս Հայոց, Վրաց և Աղուանից, զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն և զձմեռն, զտիւ և զգիշեր, անվեճեր և առանց յապաղելոյ իսկ:

Յետ այնորիկ դէպ լինէր նովին ճշմարտութեամբ՝ երանելոյն Սահակայ լցեալ աւուրբք երկայն ժամանակօք, և վաչելչացեալ աստուածաբեր պտղոցն բարութեամբք, յառաջնումն ամի Յազկերտի՝ որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ գաւառի, ի գիւղ Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն, ի

պաշտաման անուշահոտ իւղոյն, հանդերձ աստուածահաճոյ
աղօթիւք՝ ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ:

Իսկ երանելի զուգականին լուեալ, զՄաշթոցէ ասեմ,
բազում անձկացրեաց տրամութեամբ և արտօսրագութ ող-
բովք և ծանրաթախիծ ողբովք պաշարեալ դնէր: Անդէն ի
նմին ամի, յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանե-
լոյն Սահակայ, լինէր հանդերձ սրբով վարդապետով բա-
նակն Հայոց ՅԱյրարատեան ի նոր քաղաք, և նովին հոգե-
կրօն վարուք հասանէր սրբոյն Քրիստոսակոչ կատարումն,
յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեքտասանե-
րորդում ամսեանն Մեհեկանի: Ձոր առեալ Վահանայ և
Հմայեկի կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աշխարհա-
կան ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ, և հոգևոր ցըն-
ծութեամբ, կանթեղօք վառելովք և ջահիւք բորբոքելովք և
ամենայն լուսաճաճանչ գնդիւն, յՕշականն ելանէին, և անդ
ի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիշատակն
կատարեալ:

Իսկ յետ երից ամաց անցելոց, յաջողեցան Վահանայ
Ամատունւոյ խորան սքանչելի կանգնել, տաշածոյ վիմօք
քանդակելով և ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն
յօրինեալ:

Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն ամք քա-
ռասուն և հինգ, և ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճան
սրբոյն՝ ամք երեսուն և հինգ:

Կարև

9.

ՏԵՍԻԼՔ ԲԱՂԱՔԱՅ

Աղգի աղգի տեսիլք մոլեգինք լինին ի քաղաքս բա-
զումս, և յայգուէ մինչև ցերեկոյ միտ եղեալ պշուցեալ
հային իբրև ի դարման իմն և ի կերակուր աչաց ցանկու-
թեամբք բնակիչք նոցա, և լսել անդադար զձայնս աղտե-

դի երգոց՝ որ լնուն արկանեն ի լսելիս նոցա զյիշատակաբազմաց աղտեղութեանց, որ մտանեն բռնեն յըշտեմարանս սրտից և մտաց. և այնպէս անյագ են լսել զլուրն փնասակար: Եւ այլք՝ որ ոչ էին անդր մօտ, երանի ևս տան բազմամբոխ ժողովոցն, որ երթեալ կցորդեալ կոպնեալ կանաւ փնասակարսն: Եւ կէսքն զշահ ևս վաճառացն, զոր ժողովեն միշտ ի հրապարակաց, թողուն և երթան անդր դատարկանան. և կէսքն զգործ արուեստից, որ դտանեն զդարման կենաց իւրեանց: Եւ այսու ամենայնիւ սնոտի ցանկութեամբ զաւուրս կենաց ժամանակաց իւրեանց յունայնութիւն և ի սնոտիս ծախեն:

Եւ զայն ոչ առնուն ի միտ, թէ դուսանութիւնն իւրովք պատիր արուեստիւք զապականութեան նշանակ գործէ ի տեսողս իւր, և իրք առականաց են անդ, որոց առաջի ամենայն մարդկան դնին ծանակութիւնքն: Եւ այնպէս միաժողով միանգամայն նստին բաղումք զեղերեալք ժամանակեալք ի մի ժամադրութիւն՝ լսել և տեսանել զապականութիւն աղտեղութեանց: Զի ձայնք երգչացն պէտպէս նուագովք զեղգեղեալք, և բարբառք լորստացն տեղի ապականութեան և աղտեղութեան յիշատակեն ի միտս նոցա: Եւ յորժամ ծնծղայքն և տաւիղքն բարբառեացին, առաւել ևս յաթիոս և յակճիոս կան ընկճեալք, զի զօրինակ կերպարանաց նոցա նկարեացեն յանձինս իւրեանց:

Բարսղի Վեցօրեայք, էջ 66

10.

ԲԱՐԻ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ Է ԾՈՎ

Բարի և զեղեցիկ է ծով ի խաղաղ ժամանակի, յորժամ հանդարտացեալ կայցէ չալեաց և ի մըրկաց ի պարզ և յստակ ժամանակի. յորժամ միտ եղեալ նաչիցիս ընդ ծիծաղել ջուրց նորա, որ չաղգի աղգի գոյնս ցուցանեն զերփն երփն նարօտուց, մերթ ծիրանույ, մերթ կապու-

տակի, մերթ սևաներկ երանգաց. և յորժամ քաղցրաշունչ սողոխ վէտս վէտս զճկանունսն ճօճեալ ճեմեցուցանիցէ. յորժամ ոչ բռնութեամբ օդոյ յանդգնութեան ծփեալ կոծիցէ զերկիր՝ զիւր դրացի, այլ խոր խաղաղութեամբ և ջերմեռանդ սիրով գիրկս արկեալ պատեալ կայցէ զցամաքաւն:

Առաջին գեղեցկութիւն ծովու ալս է, զի նա է ալն մեծ խոնաւութեան ջուրցն բազմութեան, և յաներևոյթ և յանդունդս են գնացք իւրոյ յորդութեան, որպէս յայտ առնեն փորուածք երկրի և ցնցղկաձև երակք՝ որ են ի միջի նորա: Զի ջուրք ծովու փորեն ծակոտեն զերկիր, որ և գնան ի նմա մանուածապատ շրջանօքն, շրջին կոծին ընդ վայրս բազումս, մինչ քամին պարզին աղի ճաշակքն և դառնութիւնք, և ապա բխեն ի ներքոյ ի վեր քաղցր և անուշ ճաշակօք, և առնին ըմպելի ուրախարար ամենայնի, որ գեռան յերկիր:

Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, վասն երազընթացն գնացից ջուրցն անդնդոցն, որ պայմանաւոր չափով բաժանին բաշխին ընդ ամենայն կողմանս, լինել հանգիստ ամենայնի: Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, որ ասպնջական է հիւրամեծար գետոց բազմաց, որ յամենայն տեղեաց մտանեն ի նա: Առնու ամփոփէ զամենեւին, և ինքն կայ ի նոյն սակի և ի նոյն սահմանի առանց թերութեան, յաւելուածութեան: Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, զի նա է ալն գլխաւոր՝ ջուրցն օդոց, որ պարզին ելանեն ի նա ճառագայթիւք արեգական, յառնուլ ընդ աղօտ ի նուրբ ջերմութեամբն քաղցրացուցանել զջուրսն քաղցրացուցիչ տապովն, որ ձգին ելանել ի բարձունս վերինս: Եւ առնուն ջերմութիւն ի տապոյն արեգականն, և ապա դառնան հովանան հովանեօք ամպոց, որ զնոսա ընդունին, ի շնչել հողմոց ամպավարաց, և ապա գան հասանեն ջուրքն լինել յանձրեա, թանան զերկիր և արբուցանեն զնա:

Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառք բարի, զի պնդէ ամրացուցանէ զկղզիսն՝ որ ի միջի նորա,

և պահին առանց ֆլապու, և առանց նենդութեան կերակրին
ի նմանէ իբրև ի ցամաքի, և առնին ի նմա գեղեցիկ օթե-
ւանք տեղւոջէ ի տեղի, և ի հանգիստ աշնոցիկ, որք շրջին
ի նմա:

Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառք
բարի. քանզի նովին ընտրին և սահմանին աշխարհք ի
միմեանց: Եւ է դարձեալ ճանապարհ յատակեալ ի շահ վա-
ճառականաց, և ամենայն կերպարանօք լցուցիչ է կարօ-
տութեան մարդկան: Շահ մեծաշահ է մեծատանց՝ բերելով
զվաճառն ազգի ազգի, դարմանիչ և կերակրիչ է աղքա-
տաց, զի գտանեն ի պատճառս նորա զպէտս կարօտու-
թեան կենաց իւրեանց:

Եւ ես զի՞նչ իցեմ տկար մի տառապեալ՝ կալ ճշգրի-
տիւ պատմել զմեծապայծառ գեղ վայելչութեան ծովու:

Բարսի Վեցօրեայք, էջ 78—80.

11.

ՓԱՌՔ ՄԱՐԴԿԱՆ

Ամենայն մարմին խոտ է և ամենայն վայելչութիւն
մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ: Եւ արդ միտ եղեալ նայես-
ցուք, զի սակաւօրեայ կարճակեաց նուազ ուրախութեամբ
է ազգ մարդկան. զի ամենայն հանգիստք և ամենայն
ուրախութիւնք նոցա ի սակաւ աւուրս և ընդ հուպ ժա-
մանակս սպառեալ պակասին. իբրև դալարի բուսեալ և իբ-
րև զխոտ ծաղկեալ թառամեալ խամրին, և ամենայն վայ-
ելչութիւն նոցա իբրև զերազ թռանի: — Նայեսցուք այսու-
հետև և ընդ մարդ ի ժամանակ ողջութեան. զի արդ է առողջ
մարմնով, զուարթ երեսօք, գունեան գունով, հզօր զօրու-
թեամբ, զուարճալից բերկրութեամբ, կայտառ ի մանկեւ-
թեան, շոյտ յերիտասարդութեան, գրգեալ գրգանօք, փափ-
կասուն, փափկակեաց, բարեկեցիկ, զիւրասնունդ, երանիկ,
երջանիկ, չարայօժար և մեղսասէր: Եւ այսու ամենայնիւ

մինչ դեռ դուարձացեալ վաչելէր՝ յանկարծակի վաղվաղա-
կի հասանէ ի թշուառութիւն, վատէ ի դօրութենէ, անկա-
նի ի կենաց, ծնգի, ծիւրի, հիւանդութեամբ ջերանի, յաղ-
թի և թերեւս սակաւակեաց աւուրբք վճարի:

Նայեանց դարձեալ ընդ մեւս ևս՝ որ սմին նման է.
մեծատուն ընչաշատ, խաշնաւէտ, նշանաւոր, երևելի, տէր
ծառայից և աղախնեաց, յոր եկեալ յեցեալ և թիկունս
արարեալ վասն մեծութեան՝ օտարաց և պանդխտոց. կէսքն
շութափեն, կէսքն հպատակութիւն մատուցանեն, կէսքն
սեղանակիցք լինին, կէսքն ակնառութիւնս կատարեն,
կէսքն առաջի սուրհանդակք, կէսքն յետոյ ունին պատիւ,
ընթանան աստի և անտի, շուրջանակի բարեկամք և բա-
րեասացք, և բազում ազգատոհմս և թայրաթոտք. եւ նորա
այսպէս թուի, եթէ նորա է աշխարհս գոյիւ իւրով. և այս-
պէս խաղացեալ երթան զհետ նորա բազմամբոխ՝ ժողո-
վուրդք մարդկան. զոմանս ի գործ առնէ, զոմանս ի ճա-
նապարհ, և բազումք անդէն շուրջ զնովաւ նմին սպասիկք.
և ամենեին նախանձելի է ամենեցուն, որ պատահին նմա:

Յաւել դարձեալ ի վերայ այսր մեծութեան զիշխա-
նութեանն մեծութիւն և զպատիւս արքունականս, լինել
զօրագլուխ զօրաց, հրամանատար ազգաց, դատաւոր քա-
ղաքաց, առնուլ յանձն և պատուեալ յօրինեալ սպասուք, հրա-
պարակացն յարդարելոյ, փողոցացն զարդարանաց, ճանա-
պարհացն յատակելոց, գոհացն մաքրեցելոց, յօրինեալ կար-
գօք սպասաւորացն՝ որ կարգեալ տողեալ երթան զերկայ-
նաձիգ հրապարակսն:

Եւ այսպէս խաղացեալ երթան մեծաւ շքով և բազում
պատուով. քարոզքն առաջի աղաղակեն, մի մի զգեղգեղեալ
բարբառսն նուագեն, որոտան, հնչեն, լնուն աղաղակաւ
զհրապարակսն: Աստի անտի նուիրակք հպարտացեալք ամ-
բարհաւաճեալք ստիպեն ճեպեն, զխառնադանձ ամբոխն
ի բաց պարզեն. նկարեալ ունին յաշս և յերեսս զահ և
զերկեղ սպառնալեացն, արկանել շտապ տազնապի ամենե-
ցուն, որ խառնիխուռն նոցա ի դիմի հարկանիցին: Անդ

են տեսիլք տհազինք և արհաւիրք սրտաբեկութեան, կապանք շղթայից և պէսպէս կերպարանք հարուածոց, տանջանք ազգի ազգի, մահք դառնաշունչք. և ժողովք ռամիկ մարդկան սրտաթափ սրտաբախ լինին յահէն և յերկիւղէն ի միտջէ ի վիշապաշունչ բարբառոյն՝ իւրեանց ազգին և նմանոյ: Եւ այլ զի՞նչ ևս:

Յետ այսր ամենայնի գայցէ հասանիցի ի վերայ հպարտացեալ աչաց ամբարտաւանին, յանկարծակի ի միտմ գիշերի հասանի ցաւ յանկարծակի իբրեւ զնետ մոլորական, և ջերմ և տենդ տապախառն իբրեւ զհուր բորբոքեալ հնոցի: Սկսանի այսուհետեւ մերթ յօրանջել յողն երթալ, մերթ ձգտել պարապատել: Եւ անդէն վաղվաղակի իբրեւ ժամադիր ժամանակաւ բառնան կեանք հպարտացելոյն, և իջանէ լինի հող ի բարձրացեալ հպարտութենէ. ելանէ ի բնակութենէ մարդկան, հեռանայ ի կենդանեաց և ի բազմամբոխ ժողովրդոց, որով ամբարհաւաճեալ մեծամտէր. և այն ամենայն մեծասպաս փառաւորութիւնքն իբրեւ զերազ թռանին:

Բարսղի Վեցօր. էջ 85—6.

12.

ՄԵԾՈՒԹԻՒՆ ԱՐԵՔԱԿԱՆ

Զիցէ՞ արդեք տեսեալ քո ի բարձրաբերձ բարձրավանդակաց զդաշտ ընդարձակ և մեծանիստ, յորում վարիցին հարկիք եզանց ի բացավայրի ուրեք. զիամրդ արդեւք թուեսցին քեզ հանդերձ եղնողաւն՝ որ վարիցեն զնոսա, այլ թերեւ իբրեւ զմըջիւնս գետնագնացս, յօգոյ անտի՝ որ այլալկեաց զտեսիլ աչաց քոց:

Եւ կամ չիցէ՞ տեսեալ ի գլխոյ բարձրացեալ լերինն զծով մեծ իւրով մեծանիստ լայնութեամբն, և հայեցեալ պշուցեալ ընդ նա և ընդ կողիսն, որ իցեն ի միջի նորա, զրչափ ինչ փոքր արդեւք երեսցին քեզ մեծութիւնք նո-

Եւ խոր ևս սաստկանայր սոփն և լիզաջինջ առնէր զամենայն ժողովուրդն, և տանեատան լի էին կանամբք և մանկատով՝ որ լուծեալ անկեալ դնէին, և հրապարակք՝ ծերոցն դիակամբք. իսկ երիտասարդք և կուսանք դանդաշէին իբրեւ զստուեր, և իբրեւ պատկերք ի հրապարակս շըրջէին և անկեալ գլորէին և ճար ուրեք միոյ ի նոցանէ ոչ լինէր ի չարչարանաց. զի թաղել իսկ ոչ կարէին զսիրելիս իւրեանց. և այն որ ժուժկալն էր, ձանձրացեալ էր ի տրամութենէ անտի դիականցն մեռելոց. և թէ զինչ անցք իսկ ընդ նա անցցեն՝ ոչ դիտէր. զի բազումք ի նոցանէ ի վերայ թաղելոցն անկանէին և մեռանէին: — Բայց բազումք մինչ չե հասեալ էին ի գերեզման անդր՝ մեռանէին. և յայս ամենայն անհնարին նեղութիւնս՝ ողբք և լալիք ոչ գոյին. զի սոփն սաստկացեալ զամենայն վիշտս չարչարանացն մոռացուցանէր. և ցամաք աչօք տանջեցեալք ի մահ հայէին՝ ընդ այնոսիկ որք զառաջէին զնոսա ի մահ. զի խոր լուծիւն պատեալ էր զքաղաքաւն և գիշեր լի մահուամբ:

Նսեբ. սլամ., էջ 155.

25.

ՍՔԱՆՁԵԼԻՔ ԲՆՈՒԹԵԱՆ

Ե՛կ դու, նախ տես զգարուեն, և ի նմին զծաղիկսն ազգի ազգի. վարդի զկարմրութիւն և շուշանի զսպիտակութիւն ի միոջէ ցօղոյ, ի միոջէ երկրէ: Ե՛կ, տես դու զճճարտութիւն ի միոջէ հաստատութենէ ծառոյ. զիմրդ զկէսս ի նոցանէ ի հովանիս, և զկէսս ի նոցանէ ի պտուղս ազգի ազգի բաժանեալ ցուցանէ: Մի է աչգի, և զիմն մի ի նոցանէ յայրեաց տուեալ է և զիմն մի ի նոցանէ ի բոյս, և զիմն մի նոցանէ ի դնդակս, և զիմն մի ի տերեւ, և միանգամայն զամենայն ողկոյզս խաղողոյ: Ե՛կ զարմացի՛ր դու զեղեգանն կեղևնօք զմիմեամբք պատելով, և ստէպ ոտէպ առ միմեամբք զծուռն զապելով: Ի միոջէ երկրէ ելանէ սողուն և զազան, երէ

րա. և կամ յորչափ սակաւութիւն տեսանիցես զմեծութիւն
 նաւու, որ բարձեալ բերիցէ աղիսաղիսեալ օղերձեալ զբազ-
 մաշահ վաճառան, հանդերձ սպիտակ առաքաստիւն՝ որոյ
 խորշ առեալ՝ գոգ գործեալ տանի զնա յարշաւանի, ճեմեալ
 ճօճեալ ի վերայ վայելուչ ջուրցն մկանաց. այլ թերեւ իբ-
 րե զձագ մի աղաւնոյ տեսանիցես զնաւն աղաղձուն, յայ-
 լայլել օղոյն՝ որ քայքայէ գտեսիլ աշացդ լուսաւորաց, որ
 ոչ ետ ճշգրտիւ նշմարել գտեսիլ իրացն լուսաւորաց, քան-
 զի չառնի բաւական լոյս աշացն զհեռաւորսն իբրե զմօ-
 տաւորս տեսանել: Զի զլերինս բարձունս և զմեծամեծս,
 որ զատեալ և մեկնեալ են ի միմեանց խորածորովք, յոր-
 ժամ հաչեցեալ տեսանիցեմք ի հեռաստանէ, այնպէս տե-
 սանիցեմք՝ եթէ շրջանս առեալ զայցեն շուրջ զմեւք. քան-
 զի այլայլի տեսիլ աշացն երկնահայեաց տարածիւք, և
 վատէ զօրութիւն լուսոյն աշացն, և ոչ կարէ ճշգրտիւ նըշ-
 մարել զխորածորոցն անջրպետսն: Եւ ոչ զկերպարանս և
 զնշմարանս տարերցն կարէ նկատել հաւաստեալ ի հեռա-
 տանէ, զի աշտարակքն չորեքկուսիք՝ բոլորակք երեխն, և
 այնպէս թուին՝ թէ շուրջ զայցեն. և մեծութիւնք ետեղա-
 կալք տարերց ի բացուստ իբրե շարժունք երեխն, և ոչ
 որպէս հաստատեալ կան ի տեղւոջ՝ նովին կերպարանօք
 երեխն ի հեռաստանէ:

Եւ յայսմ ամենայնէ յայտ է, եթէ մեծ է արեգակն
 քստ վկայութեան գրոցն, որ եղև ի վերայ նորա, և բիւ-
 րապատիկ և անբաւ մասամբք մեծ է քան զայն, որչափ
 երևի: Եւ յայսմ օրինակէ յայտնի ի միտ առ՝ զինչ չափ է
 մեծութեան նորա. տես յորչափ բազմութիւն աստեղաց են
 յերկինս, և ընդ ամենեսեան ոչ են բաւական լուսաւորել
 զախուր տրամութիւն զիշերւոյն, և արեգակն միայն միով
 անձամբ, չորժամ երևի և տարածեսցէ ի վերայ օղոյ զլոյսն,
 զամենայն սահմանս աշխարհիս միանգամայն լուսաւորէ,
 և զաչս ամենայն տեսողաց՝ որ ի նորա հանդիպութիւնն
 կարկառեալ յառեալ հաչեսցին: Նա և մինչ չև երևեալ և
 ընդ երկիր ծաւալեալ իցէ քաղցրահայեաց ճառագայթիւքն,

ցրուէ մաշէ զխաւարն, և հետակորոյս առնէ զաղջամուղջն
բառնայ զտխուրն տրտմութիւն, և ի տարածեալ մեծա-
պայծառ լուսոյն ծածկէ զլուսաւորութիւն աստեղացն. և
զթանձրամած օդոյն զստուերն մերկանայ յերեսաց երկրի
և զխաւարն ձթապատ հալածական ի տիեզերաց երկրի: Եւ
ընդ նմին օդ քաղցրաշունչ շնչէ ընդ առաւօտս յաշխարհի,
և ընդ արեւածայրս լուսաւորին՝ արկանէ ցօղ մանրացօղ ի
ժամանակս ամարայնոյ ընդ ամենայն երեսս երկրի: Եւ
ուստի՞ կարող է լուսաւորս այս զանչափ մեծութիւն երկրի
միտմէ երեւելով յանկարծածին ժամովն լուսաւորել, եթէ ոչ
զի ի բարձրացեալ բարձանցն՝ որ ունի զմեծատարած բո-
լորն բոլորակ, զանչափ ճառագայթսն լուսոյ արձակէր:

Բարսի վեցօրեայի, էջ 129—131.

13.

ՄԱՐԴ ԵՒ ԾԻՄԱՌՆ

Մի ոք կարի յոյժ տրտմեացի վասն աղքատութեանն,
և մի ոք անչափ մոռացի՝ զանձին հատանել զյոյս, յոր-
ժամ ոչ ինչ գտանիցի ի տան: Նայեսցի ընդ ծիծառն ան-
ջատ և միանձն. տեսանես զիւրդ զալակիցի, տկար զօ-
րութեամբն առնիցէ զաղարս անձին: Զի յորժամ զտառա-
պանաց բունիկն կամիցի շինել, բերանացի քաղէ տանի
շիղս, և քանզի ոտիւքն ոչ կարէ կրել կաւ, զծայրս մագ-
լացն ի ջուրսն թանայ, և ելանէ ընդ մանր փոշի գնայ, և
յայտպիսի տառապանաց՝ հնարիւք լնու զկարօտութիւն
կաւոյն կրելոյ: Եւ առ սակաւ սակաւ հնարի շինել զվա-
րանացն զբունիկն. դնէ նախ զկաւն, և ապա զշիղն ի վե-
րայ իբրեւ զպահանգս կապէ, և այնպէս կատարէ զշինուած
բունոյն, զի հանէ ի նմա ձաղս և սնուցանէ ի սմա զձաղսն:

Եւ եթէ դէպ տացէ ցաւել աչաց միոյ ուրուք ի ձա-
ղուց անտի, և կամ հարցի ընդ իմիք և փասեսցի, գիւտա-

բժշկութեան ունի բնութեամբ՝ մատուցանել աչաց ծննդոց
իւրոց և բժշկել:

Չայս ամենայն հնարս այսմ տկար թռչնոյս առցէ
մարդ աղքատ ի մխիթարութիւն իւր, զի մի վասն աղ-
քատութեանն անկցի ի գործս չարեաց. և յորժամ վիշտք
ինչ անհնարինք հասանիցեն ի վերայ մեր յաշխարհի, մի
վհատեալք և լքեալք անյոյս լինիցիմք:

Բարսի վեցօրեայք, էջ 168—9.

14.

Ի ՍԵՔՆԵՐԻԱՆՈՍԷ ԵՄԵՍԱՑԻՈՅ ՀԱՏՈՒԱԾՔ

1. Աղաչեմ, մի ձանձրանայք զլսելն, և յշտեմարանս
մտացդ ամփոփեն զիմաստս խօսիցս, զի մի վայրապար
առ լսելեօքդ հոսեացին. որպէս ջուր ընդ վայր ծաւալեալ՝
չմտանէ ընդ երկիր և չարբուցանէ զանդս, այլ յորժամ
յառու անկանիցի և ընդ կորիսն գնայցէ, չծախի ընդ վայր,
այլ զանդսն ուողանէ. և այժմ մի ցրուեսցին բանքս, այլ
ուողանիցեն զանդս մտաց ձերոց իմաստք բանիցս:

(էջ 46)

2. Եւ մի զարմանայցես, եթէ թեթեւ բնութիւնն
զմարմինն ծանր երարծ. նախ աստէն իսկ յայսմ արարածս՝
որ մեզս երևին, է ինչ որ բնութեամբ ծանր է, և է ինչ
որ յախտարակաց թեթեւ է. և չէ ինչ ըստ ծանրութեան, և
նչ ըստ մեծութեան, այլ ըստ իրաց բնութեան արարածոց,
որպէս զիարդ և իցէ: Ընդէ՞ր ամենայն մայրք մեծամեծք,
և թէ ամենայն իսկ անտառք կոտորեսցին և ի ջուր ան-
կանիցին, չընկղմեսցին, և զասեղն մի փոքրիկ կամ սա-
կաւ ինչ քծուար յերկաթոյ՝ չկարէ ծով մեծ ի վեր ունել.
և այսպէս ոչ ըստ մեծութեան ինչ է, և ոչ ըստ ծանրու-
թեան, այլ յարարչին արուեստէ: Բայց սակայն երկաթոյ
ուրոյն առանձին չէ հնար ի վերայ ջուրց կալ, այլ թեթեւ
իւրք կայ ի վերայ ջրոց, և կրի տեղեաց ի տեղիս: Ընուն

զնաւս մեծամեծս երկաթով և տանին յն և կամին. և քան-
զի թեթե է փայտի բնութիւն, բառնայ թեթեւն զծանրն:
Առ միւս ևս այլ օրինակ. մարդ չկարէ բազում ժամս ի
վերայ ջուրց դողալ, թեպէտ և զարուեստն դիտիցէ, այլ
քանզի չկարէ կարի ի տոկ ձգել առանց հանգչելոյ, աշխա-
տին բազուկքն, և հարկ լինի ընկղմելոյ:

(Էջ 108)

3. Օրինակ ինչ նմին ի մէջ բերցուք, թեպէտ և մթին
և ընդ աղօտ իցէ, սակայն և ի փոքուն առնու ոք գոնէ սա-
կաւ ինչ զնշմարանս մեծին: Առ երկաթ և մխեան ի բովս
հրոյ, և տես որպիսի ինչ էր՝ մինչ չե ի հուր մխեալ էր.
մթար երեսօք, ցուրտ առ ի շօշափել. և յետ ի հուրն մտա-
նելոյ՝ լուսաւոր տեսեամբ, ջերմն զննելով. և չկորոյս զլի-
նելն երկաթ, այլ զի առաւելութիւն քան զիւր բնութիւնն
ընկալաւ. թեպէտ և պայծառացաւ, չվրիպեաց յիւրոց կեր-
պարանացն. զինչ կերպարանք և ի ներքս մխեսցես, նոյն
և երևի. եթէ բոլորակ, եթէ երեքկուսի, եթէ չորեքկուսի,
և եթէ զիւրդ և իցէ՝ զկերպարանս չփոխէ. բայց գոյնն
զհրոյն գոյն առնու:

Եւ չիցէ՞ տեսեալ, զիւրդ ուրք ի տար աշխարհէ յետ
բազում ժամանակաց գայցեն, և ընտանիքն նշան խնդրեն,
նչ զփառաւորութեան ինչ, թեպէտ և փառաւոր գայցեն. այլ
զատաջին կենացն, թէ արդարեւ սա նա իցէ. և ոչ այնչափ
ինչ ճշգրիտ ի հանդերձսն հային, որպէս յօնացն կերպա-
րանս և ձեռացն նշմարանս, և ի հերան՝ թէ ձաղկահեր
կամ գանգրահեր իցէ. և մարմնոյն թերութիւնք քարոզ
անծանօթին լինին:

(Էջ 116—7)

4. Ո՞վ իցէ ի ձէնջ, որոյ իցէ բարեկամ, և երթիցէ
առ նա ի հասարակ գիշերի, և ասացէ. «Բարեկամ, տո՛ւր
ինձ երիս նկանալս հաց. քանզի բարեկամ իմ եկն ի ճա-
նապարհէ, և չիք ինչ առ առաջի դիցեմ»: Եւ նա պատաս-
խանի տացէ և ասացէ թէ «Դուրքդ փակեալ են, և ման-
կունքս ընդ ինե կան յանկողնի. մի աշխատ առներ զիս»:

նչ կարեմ յառնել և տալ: Եւ դի՞նչ չեա աշնորիկ. ամէն
ասեմ ձեզ, եթէ և վասն բարեկամութեանն ոչ տալցէ, սա-
կայն վասն ժտութեան նորա յարուցեալ տացէ նմա աւելի
քան որչափ կամէրն:

(էջ 159)

Ծ. Ձոր օրինակ յորժամ բժիշկն գերկաթն ի գործ
արկանէ և խարանս ի մարմինն դնէ, ոչ աշնու ընդ մար-
դոյն կռուի, այլ ընդ ցաւսն մարտնչի: Միթէ տեսնէր եր-
բեք զբժիշկ առ ցասման ձեռն ի գործ արկեալ, կամ առ
դայրացուս ինչ ի խարանս մատուցեալ, կամ այլ ինչ նոյն-
պիսի: Թեպէտ և հիւանդին երեսքն բժշկին ահագին թուեա-
ցին, այլ բժշկին օգուտ գործեալ կայ ի միտս. և ոչ վասն
զի ցաւածին ահագին բժշկութիւնն թուիցի, և ճարտարու-
թեանն խոստումն ահագին ինչ իցէ: Վիրածն յորժամ տե-
սանիցէ զբժիշկն՝ զի կտրել զվէրն կամիցի, ահագին հա-
մարի, և իբրեւ ի թշնամւոյ խուսափէ. իսկ յորժամ բժըշ-
կեացի, զոր երբեմն տեսանէր և զերեսս դարձուցանէր, յե-
տոյ մօտ հայի և երկիր պագանէ: Եթէ չգիտիցեմք իսկ,
զի առ դայրացուս ցաւոցն՝ թշնամանս դնեն հիւանդքն
բժշկացն, և բժիշկն ներէ դայրացելոցն. քանզի գիտէ՝ եթէ
ոչ ի կամացն են թշնամանքն, այլ առ ցաւսն: Իսկ յոր-
ժամ ապաքինին յախտէն, և վարձ ևս տան նոցա, զորս
անագորոնս համարէին. տան վարձս՝ ոչ իբրեւ պահանջեալք,
այլ ինքնակամ յօժարութեամբ: Նոյնպէս և մեք այժմ
դժկամակ լինիմք ընդ նեղութիւնս. և յորժամ հասանիցէ
պտուղ նեղութեանցն, ապա դարմացեալ ասեմք՝ եթէ ան-
ցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ ի հան-
դիստ:

(էջ 176)

Ի ՔՐՈՆԻԿՈՆԷՆ ԵՒ ՍԵՐԵԱՅ

Ազդե եղև հօրն նորա նաբուպադասարայ, եթէ շահապն նախարարապետ՝ որ կարգեալ կայր ի վերայ աշխարհին Եգիպտացւոց և կողմանցն Ասորւոց և Փիւնիկաստան դաւառացն, կապարճս դարձոյց, յետո եկաց յապստամբութիւն: Եւ զի չէ՛ր ատակ այնուհետեւ ինքն կշտամբել, գումարեաց եղ ի ձեռին որդւոյն իւրում նաբուկոդրոսորայ, որ այնուհետեւ ի չափ իսկ հասակի հասեալ էր, մասն ինչ ի զօրացն, և առաքեաց երթալ ի վերայ: Երթեալ հասեալ նաբուկոդրոսորոս՝ խումբ գործեալ տայր պատերազմ ընդ ապստամբին և յաղթէր, և զաշխարհն, որպէս և էր իսկ ի բնէ, անդրէն ընդ իւրեանց թագաւորութեամբ նուաճէր: Իսկ հօրն նորա նաբուպադասարայ դէպք տային ի նմին ժամու հիւանդանալ ի Բաբելացւոց քաղաքին և վճարել զկեանս, թագաւորեալ ամս իս:

Զգաստ լինէր յետ բազում ժամանակաց նաբուկոդրոսորայ զհօրն վախճանէ. կարգէր յարդարէր զիրս երկրին Եգիպտացւոց և զայլոցն աշխարհաց, և զգերին Հրէից և զՓիւնիկեցւոց և զԱսորւոց և զԵգիպտացւոց ազգացն, հրաման տայր ոմանց ի բարեկամացն հարստաբուն զօրօք և զայլ ևս զառ և զկահ և զկազմած խաղացուցանել ի Բաբելոն: Երթեալ հասեալ՝ գտանէր նուաճեալ զիրս ամենայն ի Քաղդէացւոց, և պահեալ նմա զթագաւորութիւն՝ ուրումն ազնուականի ի նոցանէ: Տիրէր բովանդակ հայրենի իշխանութեան. և զգերւոյն հրաման տայր՝ յազնիւ տեղիս Բաբելացւոց աշխարհին բնակեցուցանել: Եւ ինքն յառէ և յաւարէ պատերազմին՝ զմեհեանն Բելայ և զայլն ամենայն առատութեամբ զարդարէր: Եւ ի բուն քաղաքն և ալ ևս արտաքուստ ի ներքս յաւել ջուրք. և պնդէր գտեղիսն, զի մի ևս լինիցի հնար պաշարողաց՝ զգետն ի քա-

դաքն դարձուցանել: Եւ յաւելոյր երիս պարիսպս ներքնոյ
քաղաքին և երիս արտաքնոմն. և զկէս պարսպացն ի
նիւթժուէն աղիւսոյ և ի նաւթէ շինէր, և զկէսն ի լոկ
աղիւսոյ. և պատէր աղնուագոյնս զքաղաքն պարսպօք, և
զդրունսն զարդարէր դիւցազունս: Եւ այլ արքունիս մօտ
ի հայրենի արքունիսն շինեալ յաւելոյր. գորոց զչափ և
զգեղ և զազդի ազգի յօրինուածս հազիւ ոք ուրեք եթէ
պատմել կարասցէ: Բայց այնչափ միացն՝ թէ կարի նորա-
կերտ նորանշան մեծապայծառ և չնաշխարհիկ գործ էր. և
կատարեցաւ համօրէն ի հնդեռասան աւուր: Եւ յարքու-
նիսն աշտարակաքարկուծս բարձրաբերձս հանդերձ մահար-
ձանօք շինեալ ջօրինէր. և զճակատս կողակացն ի նմանու-
թիւն լերանց յարդարէր: Եւ տնկեաց ծառս ազգի ազգիս.
և գործեաց և կաղմեաց զանուանեալ բուրաստանսն կա-
խաղանաւ, վասն տենչանաց կնոջն իւրոյ ի լեռնային հո-
վասուն վայրաց, որ ի Մարաց աշխարհին հովասուն
սնեալ էր:

(էջ 64—70).

16.

ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՄԵՀԵՆԻՑ

Առնոյր այնուհետև խորհուրդ հաւանութեան ընդ թա-
ղաւորին և ընդ իշխանսն, նախարարօքն և զօրօքն հան-
դերձ՝ վասն խաղաղութեան հասարակաց, քակել, կործա-
նել, բառնալ զգայթակղութիւնսն, ի միջոյ ի բաց կորու-
սանել, զի մի ումեք լիցի խէթ և խութ այնուհետև ընդ
ոտս անկանել և խափան առնել՝ ելանել յազատութիւնն
վերին:

Իսկ անդէն վաղվաղակի թաղաւորն ինքն իշխան հրա-
մանաւ և ամենեցուն հաւանութեամբ, գործ ի ձեռն տալր
երանելոյն Գրիգորի, զի զյառաջագոյն զհայրենական հնա-
մեացն նախնեացն և զիւր կարծեալ աստուածսն չաստ-

ոււածս անուանեալ՝ անյիշատակ առնել, ջնջել ի միջոյ։ Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն դօրօքն հանդերձ ի վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբաղինսն Անահտական դիցն, և որ յերազամոյն տեղիսն անուանեալ կայր։ Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան զրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին։

Ուր և երևեալ կերպարանեալ դիւացն ի նմանութիւն առն և ձիոյ բազմութեան, կազմութեան գնդի և հետեակազօրու, մկնդաւորք և ուռնաւորք, առաջի ընթացեալք ի կերպարանս մարդկան նմանութեան, նիդակօք և նշանօք, ի դէն և ի դարդ վառեալք, մեծաւ գոչմամբ զաղաղակ հարեալ՝ փախստեալք յԱնահտական մեհեանն անկանէին, ուստի ընդ հասեալսն մարտ եղեալ կռուէին. նետս անոյժս և քարավէժս թանձրատարափս ի վերուստ ի շինուածոցն ի խոնարհ զմարդկաւն ցնդէին։ Իսկ Գրիգոր՝ իբրև տեսեալ զայն, դիմէր ի դուռն մեհենին և ամենայն շինուածք մեհենին ի հիմանց դղրդեալ տապալեցան, և լուցեալ յանկարծօրէն փայտակերտն հրդեհեցաւ և ծուխն ծառայեալ մինչև յամալս հասանէր։ Իսկ մարդկանն հասելոց անդէն քանդեալ զհիմունս մնացեալս աւերէին, և զգանձսն մթերեալս՝ աղքատաց, տառապելոց և չքաւորաց մասն հանէին։ Եւ զգաստակերտսն և զսպասաւորսն քրմօքն հանդերձ և նոցին գետնովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան։

Եւ երթայր հասանէր ի Դարանաղեաց գաւառն, զի և անդ զանուանելոցն զսուտ աստուածոցն զբաղինսն կործանեցեն, որ էր ի գեօղն Թորդան, մեհեան անուանեալ սալխտակափառ դիցն Բարշամինայ։ Նախ զնա կործանէին, և զպատկեր նորին փշրէին. և զգանձսն ամենայն, զոսկւոյն և զարծաթոյն, աւար հարկանէին և զայն աղքատաց բաժանեալ բաշխէին։ Եւ զգեօղն ամենայն զգաստակերտօքն

հանդերձ և սահմանօքն յանուն եկեղեցւոյն նուիրէին։...

Ապա երթեալ հասանէր յամուր տեղին անուանեալ Անի, ի թագաւորարնակ կայեանսն հանգստոցաց գերեզմանաց թագաւորացն Հաչոց։ Եւ անդ կործանեցին զբանայնի։ Զևս դիցն Արամազդայ, հօրն անուանեալ դիցն ամենայնի։ Եւ անդ կանգնեալ զտէրունական նշանն, և զաւանն ամրականաւն հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրէին։

Եւ ապա յետ այսորիկ անդէն ի սահմանակից գաւառն եկեղեաց ելանէր։ Եւ անդ երևեալ դիւացն ի մեծ և ի բուն մեհենացն Հաչոց թագաւորացն, ի տեղիս պաշտամանցն, յԱնահտական մեհենին, յերէզն աւանի. ուր ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն մարտնչէին, և մեծագոյն բարբառով զլերինս հնչեցուցանէին։ Որք փախստական եղեալք, և ընդ փախչելն նոցա կործանեալ բարձրաբերձ պարիսպքն հարթեցան։ Փշրէին զոսկի պատկերն Անահտական կանացի դիցն, և ամենևին զտեղին քանդեալ վատնէին, և զոսկին և զարծաթն աւարդին քանդեալ վատնէին, և զոսկին և զարծաթն աւարդին քանդէին զնանեական մեհեանն դստերն Արամազդայ ի թիլն յաւանի։ Եւ զգանձս երկոցուն մեհենացն աւարեալ ժողովեալ՝ ի նուէր սպասուց սուրբ եկեղեցւոյն Աստուծոյ թողուին տեղեօքն հանդերձ։

Եւ այսպէս ի բազում տեղեաց բառնային զգայթակղեցուցիչսն անմոռնչս, զձուլեալսն, կռեալսն, կոփեալսն, քանդակեալսն, անպիտանսն, անօգուտսն, քաւակարսն, արարեալսն անմտութեամբ ցնորելոց մարդկան։

Գայր հասանէր ի Մրհական մեհեանն անուանեալ որդւոյն Արամազդայ, ի գիւղն՝ զոր Բագայառիճն կոչեն։ Ըստ պարթեալէն լեզուին։ Եւ զայն ի հիմանց բլեալ խլէին, և զգանձսն մթերեալս աւար հարկանէին և աղքատաց բաշխէին, և զտեղիսն նուիրէին եկեղեցւոյ։...

Լուաւ Գրիգորիոս, թէ վահէվանեան մեհեանն քանդեալ է լերկրին Տարօնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոսկւով

և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ թագաւորաց ձո-
նեալ անդ. ութերորդ պաշտօն հռչակաւոր, անուանեալն
Վիշապաքաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայ-
ոց Մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոցն
Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ և
անուանեալ ըստ չաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտի-
շատ: Զի յայնժամ դեռ ևս շէն կային երեք բազինք ի
նմա. առաջին՝ մեհեանն Վահէվանեան, երկրորդն Ոսկե-
մօր Ոսկեծին դից, և բազինն իսկ չայս անուն անուանեալ
Ոսկեհատ Ոսկեմօր դից. և երրորդ՝ մեհեանն անուանեալ
Աստղկան դից, Սենեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ
յունականին Ափրոդիտէս: Արդ՝ դիմեաց դալ սուրբն Գրի-
գորիոս, զի քանդեսցէ և դայն ևս, զի տակաւին իսկ տգէտ
մարդիկ խառնակութեան զոհէին յայս բազինս մնացեալս:

(Ագաթանգեղոս).

17.

Հ Բ Գ Ե Հ

Իցէ՞ տեսեալ, յորժամ հրդեհ զմեծամեծ տանց հար-
կանիցի, զիարդ ցոլանայ բոցն և ծուխն և անդր չերկինս
կցի, և չիք որ ժտի մատչել և զչարն շիջուցանել. այլ
ամենայն ոք ընդ անձին ճեպի և զիւրն միացն գիտէ. և
հրդեհն ոչ մեղմով, այլ սաստիկ զամենայն ճարակեսցի. և
բազում անգամ ամենայն քաղաքն շուրջ կայցէ և տեսողք
ևեթ չարեացն լինիցին, և ոչ զօրավիգն և օգնականք: Եւ
անդ իցէ տեսանել, զի ոչ ինչ օգուտն լինիցին որ շուրջն
կայցեն. այլ իւրաքանչիւր ոք զձեռս ձգիցեն, և նոցա՝ որ
առ ժամայն իցեն եկեալ, զտեղն իմն ցուցանիցեն, կամ
ընդ պատուհանս զբոցն ցոլացեալ, կամ զգերանսն՝ որ
հապ կիսաչրեաց անկանիցին, կամ ողջոյն իսկ զփողոցսն՝
որ միանգամայն ի սեանցն և ի մութից զերծանիցին և
չերկիրն կործանիցին: Իցեն թերեւ և բազումք յանդգունք

և ի վսեր եկեալք՝ որ և մօտ իսկ ժտիցին ի հրդեհ շին-
ուածոցն հասանել. ոչ զի ձեռն տայցեն և զչարն շիջուցա-
ցանիցեն, այլ զի ցանկալի իմն դռեսիլն համարիցին, յոր-
ժամ ի մօտոյն ստոյգ կարիցեն նշմարել, որոց մինչ ի
բացեայն կային, չերևէր այնպէս: Եւ անտի զինչ օգուտ
դտանիցեն, բայց թէ միայն քնատ: Եւ եթէ գեղեցիկ ևս և
մեծամեծ շինուածքն իցեն, զայն համարին եղուկ և ողորմ,
բազում արտասուաց արժանի: Նա և է իսկ ողորմ տեսիլ.
քանզի սիւնքն հանդերձ հաւեղագէս խոյակօքն մանրիցին
և ի չատակսն կործանիցին. և իցէ ինչ բազում՝ զոր ինքեանք
բեկտիցեն, կէսն ի հրոցն ալրեսցի և կէսն շինողացն
ձեռքն մղիցեն ընկենուցուն, զի մի ևս քան զևս սաստիկ
ջամբ հրոցն լինիցի: Անդ իցէ տեսանել և զբազում պատ-
կեբան՝ զոր ազգի ազգի նկարուք քանդակեալ դրօշեալ,
յորժամ ձեղունքն բանայցեն և մերկ յարկացն լինիցին,
բազում անշքութեամբ մերկացեալ խանձատեալ նշաւակ
կացցեն. և զազգի ազգի զհանդերձսն, և զոսկեղէն և զար-
ծաթեղէն անօթսն, զոր չանկարծ ուրեք տանուէքն հան-
դերձ իւրով միայն ամուսնովն տեսանէր, սաղատք հան-
դերձիցն և խնկոցն կաւշարայք ի մարմարակուռ սենեակսն
լերփներփ կճէիցն դրուագացն՝ ամենայն միանգամայն ի
միոյ հրոցն գոհիկ կաճառանոց լինիցի:

Եւ հասանէ տեսանել այնուհետեւ աղբակիրս որթա-
ւորս թիաւորս զամենեւեան խառն և անհարց ի ներքս
մտեալ: Եւ այլ ինչ ոչ իցէ անդ տեսանել, բայց միայն
ջուր և հուր և կաւ և մոխիր և զփայտսն թերայրեացս:

Ոսկերեան, Եփես. էջ 781—2.

18.

ՆԿԱՐԱԳԻՐ ԶԻՈՅ

Դճւ ազուցեր ձիոյ զօրութիւն և զգեցուցեր զրան ընդ
պարանոցաւ նորա: Արկեր զնովաւ սպառազինութիւն, և

փառս լանջաց նորա զլանդդնութիւն: Որոտաց ի դաշտի՝ և
 դափր հատանէ, ելանէ ի դաշտ զօրութեամբ: Ի պատահել
 նետից՝ արհամարհէ, և ոչ դարձցի յերկաթոյ: Ի վերայ նո-
 րա շողան աղեղն և սուսեր, և շաթիւն վահանի և նիդա-
 կի: Եւ բաթկութեամբ ապականէ զերկիր, և ոչ հաւատայ՝
 մինչև փող հարկանիցի: Եւ իբրև փող հարկանի, նա վաշ
 վաշ կարգայ, ի հեռաստանէ առնու զհոտ պատերազմի՝
 վազս առնելով և փռնչելով:

(Յոր, ԼԹ. 19—25).

19.

ՆԿԱՐԱՔԻՐ ԾՈՎԱԿԱՆ ԳԱԶԱՆԻ

Զդրուես երեսաց նորա զբանացէ. շուրջ պատամամբ
 նորա ահ: Փոր նորա վահանք պղնձիք. լօղք նորա իբրև
 զվէմ դայլախազ, մի զմիոյ կնի կցեալ, և օդ ոչ անցցէ
 ընդ նա: Զմիմեանց կալցին և ճի մեկնեսցին: Ի փռնչելոյ
 նորա փայլատակունք հատանին. աչք նորա իբրև զտեսիլ
 աթուակի: Ի բերանոյ նորա լամբաբք բորբոքեալք և հա-
 տանին անկանին շանթք հրոյ: Ընդ ոնդունս նորա ծուխ
 ելանէ հնոցի հրոյ կայծականց: Անձն նորա կայծակունք,
 և բոց ի բերանոյ նորա ելանէ: Ի պարանոցի նորա ընակէ
 զօրութիւն, առաջի նորա կորուստ ընթանայ: Անդամք
մարմնոյ նորա մաժեալք: Եթէ զեղցէ ի վերայ նորա՝ ոչ
խլրտեսցին: Գի սիրտ նորա սալացեալ է իբրև զվէմ, և
հաստատեալ կայ իբրև զսալ դարբնաց անշարժ: Ի խլրտել
 նորա՝ ահ դադանաց և չորքոտանեաց և զեռնոց երկրի:
 Եթէ պատահեսցեն նմա արդունք, ոչ ստնանեն զէնք և
 նիդակք: Քանզի համարի զերկաթ յարդ, և զպղինձ իբրև
 զփայտ փուտ: Ոչ խոցոտէ զնա աղեղն պղնձի. համարի
 զոմբաքար խոտ, և իբրև զեղէզն համարեցան նմա ուռունք:
 Ծաղբ առնէ զշարժումն հրալից: Անկողինք նորա տէգք
 սրեալք, ամենայն ոսկի ծովու ընդ նովա. իբրև զկաւ ան-

բաւ: Եռացուցանէ դանդուհս իբրեւ զկաթսայ. համարի
զծով իբրեւ զոչինչ, և դառարտարոսն անդնդոց իբրեւ զգերի
մի. համարեցաւ դանդուհս իւր ճեմելի: Չամենայն բար-
ձուհս տեսանէ, և ինքն է թագաւոր ամենայնի՝ որ ի
ջուրսն են:

(Յոր, ԽԱ.)

20.

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Փեսայն ցհարսնն ասէ.

— Ահաւագիկ կաս գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւա-
դիկ կաս գեղեցիկ, աչք քո աղաւնիք. վարսք քո իբրեւ գե-
րամակս աչծից որք երեւցան ի Գաղաադէ: Ատամունք քո
իբրեւ գերամակս կտրելոց որք ելանեն ի լուալեաց: Իբրեւ
զթել որդան են շթթունք քո, և խօսք քո գեղեցիկք. իբրեւ
զկեղեկ նռան են այտք քո: Մինչև տիւն նուադեսցէ և ըստ-
ուերքն շաբժեսցին, գնացից ես ինձէն ի լեառն զմռնե-
նեաց և ի բլուրն կնդրիկի: Ամենևին գեղեցիկ ես, մերձա-
ւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ: Սրտակաթ արարեք
զմեզ միով աղամբ քով, և միով քառամանեկաւ պարանո-
ցի քո: Մեղք կաթեցուցանեն շթթունք քո, մեղք և կաթն
ի ներքոյ լեզուի քո, և հոտ հանդերձից քոց իբրեւ զհոտ
կնդրիկի: Մտի ի պարտէզ իմ, կթեցի զմուռս իմ հանդերձ
խնկովք իմովք. կերայ զհաց իմ մեղու իմով, արբի զգինի
իմ կաթամբ իմով: **Աս զնձեմ և սիրտ իմ արթուն կայ:**

Հարսնն զգայ զփեսային բախել զգուռնն:

— Չայն սիրելւոյ իմոյ բախէ ի գրանն:

Փեսայն ասէ.

— Բաց ինձ, մերձաւոր իմ, աղաւնի իմ, կատարեալ
իմ, զի գլուխ իմ լցաւ ցօղով, և վարսք իմ ի շաղից գե-
շերոյ:

Հարսնն ասէ զայս փնչ.

— Մերկացայ դպատմութեան իմ, զիմորդ ազանիցիմ
զնա. լուացի դոտս իմ, զիմորդ ազտեղացուցից զնոսա:

Սիրելին իմ ձգեաց զձեռն իւր ընդ պատուհանն, և
որովայն իմ խռովեցաւ ի նա: Յարեայ ես ի բանալ սի-
րելու իմոյ. ձեռք իմ կաթեցուցին զմուռս, և մատուռք
իմ զմուռս լցեալս ի վերայ ձեռաց փակաղակին: Բացի ես
սիրելու իմոյ. սիրելին իմ անց, և ոգի իմ ել ընդ բանի
նորա — **նորեցի** զնա և ոչ գաի. կռեցի զնա և ոչ ետ
ինձ ձայն: Երգմեցուցանեմ զձեզ, **դստերք** **Նրոսաղեմի**,
եթէ գտանիցէք զսիրելին իմ՝ պատմեալիք նմա, եթէ
խանդակաթ եմ ես ի սէր քո:

21.

ՉԷ ՊԱՐՏ ՊԱՇՏՕՆ ՄԱՏՈՒՅԱՆԵՆ, ԱՐԱՐԱԾՈՅ

Արդ բարիոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ, և
մեզ և ամենայն արարածոց՝ որ ի ներքոյ երկնից՝ յօգուտ
և ի դարման, իբրեւ ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան
և յատակի լուցեալ՝ առ ի զխաւարն և զստուերն զերկուց
մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ. բայց ինքն
եթէ իցէ և եթէ չիցէ՝ զայն ոչ գիտէ, զի չէ ի բանաւորաց
և ի մտաւորաց. նոյնպէս և այլքն յանշնչոցն արարածոց:
Եւ թէ ջուր թէ հուր թէ երկիր թէ օդ, թէ իցեն և թէ չի-
ցեն՝ զայն ոչ գիտեն, և զսպասաւորութիւնն՝ յոր կարգե-
ցան՝ անգաղար մատուցանեն, վարելով այնր՝ որ կաղ-
մեացն զնոսա: Եւ մեք ոչ անարդեմք զնոսա, և ոչ պաշ-
տօն մատուցանեմք նոցա. ալ հաչեցեալ ընդ նոսա՝ փա-
ռաւորեմք զկարգինն նոցա և զյօրինին, զի մեզ ի պէտս
են, և կարգին իւրեանց ի փառս:

Զիւմրդ պաշտօնէիցեմք զարեգակն, որ մերթ կոչի իբրեւ
 զծառայ առ ի սպասն՝ յոր կարգեցաւ՝ հասանելոյ, և մերթ
 երթայ զօղէ իբրեւ զարհուրեալ, և տայ տեղի խաւարին
 ինուըզմիջոց ի մեծի տանս. և ընդ ժամանակս ժամա-
 նակս ի խաւար դառնայ՝ առ ի յանդիմանութիւն և յամօթ
 իւրոցն պաշտօնէից. յայտ արարեալ եթէ չեմ ես արժանի
 պաշտաման, այլ այն՝ որ զիս և զամենայն տիւ լուսաւոր
 պահէ, և զցայգ զօղեցուցանէ, և երբեք երբեք խաւարե-
 ցուցանէ՝ և իբրեւ խօսուէն բերանով անշուշտ ասողով՝ եթէ
 չեմ արժանի պաշտօն առնելոյ, այլ պաշտօն հարկանելոյ:
 Կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի, գրեթէ և մեռա-
 նի, և ապա սկիզբն առնու կենդանանալոյ, զի քեզ զյա-
 րութեան օրինակն նկարիցէ: Կամ զօղ՝ որ մերթ գոչիցէ
 վարազացեալ՝ հրամանաւ, և մերթ սարսէ ի գոչելոյն՝
 սաստիւ: Եւ կամ զհուր՝ որում և զքեզ իսկ երկրորդ արա-
 ըիչ կազմեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս՝ վառիցես,
 և յորժամ կամիցիս՝ խափուցանիցես: Կամ զերկիր՝ որ
 հանապաղ բրեմք, և ցանկ կոխեմք, և զաղբ դմեր և զա-
 նասնոց մերոց ի նա հեղումք: Կամ զջուրս՝ զոր հանա-
 պաղն ըմպեմք, և զանուշութիւն նոցա ի ժանտահոտութիւն
 ի փորի մերում դարձուցանեմք, և զներքին և զարտաքին
 աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք:

Եւ այսու ամենայնիւ յայտ է՝ թէ զոր առ աստուածսն
 ունին, անարգեն չառք և անպատուեն: Նա և գողումն և
 սոսկումն ունի զարարածսն, յորժամ զպատիւ արարչին ոք
 նոցա մատուցանիցէ. և յայտ առնէ երկիր շարժելովն, և
 լուսաւորքն խաւարելովն, և օդքն գծումելովն և քսումնելով,
 և ծով սաստկութեամբ ալեացն սպառնալեօք: Զի թէ ոչ
 սաստ արարչին նահանջէր զնոսա, մի մի ի նոցանէն բա-
 ւական էր զամենեւին սատակել՝ առ ի խնդրելոյ զվրէժ
 անարգանաց հասարակաց արարչին: Կամ ծով ծածկելով,
 որ տկար աւազովն պաշարեալ՝ չիշխէ անցանել ըստ հրա-
 ման: Կամ երկիր կլանելով, որ ի վերայ ոչնչի կայ հաս-

տատեալ, և յոչինչ գառնալ և դարձուցանել չէ պատշաճ
 դիւր զբնակիչսն: Կամ հողմ պարտասեցուցանելով, որ
 կենդանութիւնն է ամենայն շնչաւորաց, և չիշխէ արգե-
 լուլ զկենդանութիւնն՝ առանց հրամանի կենդանապահին:
 Կամ օդք երբեմն զսառամանիսն շնչելով, և երբեմն զխոր-
 շակն բերելով, և լինէր ամենայն ինչ ոչ ինչ:

Եզեիկ, էջ 14—17.

22.

ԿԱՌՔ ԱՇԽԱՐՀԻ

Այլ նա աւասիկ իբրեւ զկառս իմն լծեալ ի չորից երի-
 վարաց զաշխարհս տեսանեմք, ի ջերմութենէ, ի ցրտութե-
 նէ, ի ցամաքութենէ և ի խոնաւութենէ. և զօրութիւն իմն ծա-
 ծուկ կառավար, որ զչորս կազեցողսն ընդ միմեանս ի հաշտու-
 թեան և ի հաւանութեան պահեալ նուաճէ: Ամենայն կառք ի
 համազգեաց երիվարաց լծին, բայց միայն այսց կառաց՝ որ ի
 չհամազգեաց լծեալ են. և որ ի համազգեացն լծեալ են, երբեմն
 սայթաքեն, երբեմն օձտեն և ի տագնապի զկառավարն և
 զանձինս կացուցանեն. և երբեմն խորտակումն իսկ կառացն
 գործեն. և յորժամ ողջ կառքն իցեն և ողջ կառավարն և
 վարժ երիվարքն, ուշ եղեալ ի հանդէպ երեսացն եկի՛մ ար-
 շաւին: Եւ այս կառք զարմանալիք ի հակառակ և յանձան
 երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք, ոչ ի մի
 միայն կողմն ի հանդէպ երեսացն եկի՛մ արշաւին, այլ յա-
 մենայն կողմանս վարդին, և ընդ հանուք արշաւին, և ընդ
 բնաւ սլանան, և ամենայնի բաւական են: Յորժամ ընդ
 արեւելս ընթանան, չէ ինչ արդել՝ թէ ընդ արեւմուտս ոչ
 արշաւիցին. և յորժամ ընդ հիւսիսի վարդին, չէ ինչ ար-

զել՝ թէ ընդ հարաւ ոչ առաջացեն. զի ձեռն կառավարին
բաւական է յամենայն կողմանս դիմեցուցանել, և ընդ
չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել:

Եզեիկ, էջ 17.

23.

ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ

Սիրեացես զխոնարհութիւն, զի նմանեալ է զօրութիւնն երկաթեղէն պարսալի: Սիրեացես զզգաստութիւն, զպտուղ անուշութեան. զի որ ուտէ ի նոցանէ, չազի անձն նորա, և ուրախ լինի և ցնծայ: Ամենայն ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի, և խորհուրդ մարդոյ ի բերանոյ իւրմէ ճանաչի: Եւ զամենայն մարդ՝ առ որում մերձենայ իմաստուն, ի լեզուէ նորա ճանաչէ զխորհուրդս նորա: Եւ յոթամ ասէ որ զբան խեղկատակութեան, նա ոչ հաստատէ առ նա զլսելիս իւր: Եւ մարդ՝ որ ի չարիս խորհի, ի շրթանց նորա ճանաչէ իմաստունն. և եթէ զբանս ծաղու և խաղու և արհամարհանաց և հայհոյութեան խօսի, ճանաչէ այն՝ որ լսէն զնոսա: Ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար պտուղ չար առնէ. և ոչ կարէ ծառ դառն պտուղ քաղցր առնել, և ոչ ծառ քաղցր՝ բերել զպտուղ դառն. քանզի ի պտղոյ անտի ճանաչի ծառն: Սոյնպէս և այլ քաղցր, որ կայ ի սիրտ նորա բարի, ի նոյն գանձուց սրտի հանէ և խօսի. և այլ դառն, որ կայ ի սիրտ նորա չար, ի նոյն գանձուց սրտի հանէ և խօսի: Եւ եթէ հազար պտուղ իցէ ի ծառն, ի միոջէ անտի կարես դու ճանաչել զծառն ամենայն, և եթէ ճաշակիցես պտուղ մի ի ծառոյն, որոյ պտուղ իւր քաղցր և անոյշ է, ցանկայ անձն քո, թէ զպտուղ ծառոյն այնորիկ դու միայն կերիցես: Նոյնպէս և այլ իմաստուն, որ մերձենայ առ մարդ չար, նախ ի բանից նորա ճաշակէ զնա. ապա եթէ տեսանիցէ թէ բանք նորա անուղղայ և մոլորականք են, այլ ոչ ևս կամի լսել նմա: Եւ եթէ

մերձենալ առ մարդ իմաստուն և ուսեալ կատարեալ, նըստի առ նմա և յամէ մինչև ճաշակէ զբանս նորա. եթէ տեսանէ զի բարիք և քաղցունք են և գիտութիւն և հանճար ի են, ի ժամէ անտի անպէս կամի, թէ զամենայն բան նորա լուիցէ և ուսցի: Եւ մարդ՝ որ խոնարհ է, ի ճաշակաց իւրոց որոշէ զնա իմաստունն: Եւ որ երևի իբրև իմաստուն լուռ և խոնարհ և միամիտ, և սիրտ իւր ի չարիս խորհի, նման է նա խոնարհի ի մէջ խոնարհաց. իմաստունք՝ որ խորհին զբարիս, ի դառն մրդոց անտի ոչ ճաշակեն, որ խառնեալ կացցէ նա ի մէջ սերկեիլ մրդոց, և ճաշակ նորա զքիմս դառնացուցանէ:

Սիրեան զխոնարհութիւն, սիրելի, որ հոտ իւր անոյշ է և համ իւր քաղցր: Խոնարհն և ի բարձրութեան իւրում խոնարհագոյն է, և սիրուն է նա բարձրացելոց և խոնարհաց: Բարեկամք խոնարհի բազումք են. և ոչք հարցանեն զողջունէ նորա՝ չիք նոցա չափ:

Զգօն, էջ 187—9.

24.

ՎԱՍՆ ՍՈՎՈՒՆ ՈՐ ԿԱԼԱՒ ԶՀՐԵԱՅՄՆ

Ասացից վասն անհնարին նեղութեանցն որ եկին հասին նոցա ի սովի անդ: Յորեան յայտնապէս բնաւ ոչ ուրեք երևէր. զի վաղվաղելով ընթանային և մտանէին ի տունս և ի մառանս, և խիլ արկանէին և յուղէին, և թէ ինչ առ ումեք գտանէին և որ ուրանային՝ հարկանէին ի հարուածս դառնութեան. և թէ ոչ գտանէին առ մարդ՝ որ վասն սովոյն թաղուցեալ էին, անհնարին տանջանօք չարչարէին զնոսա: Բազումք իսկ ի ծածուկ զստացուածս իւրեանց փոխանակէին ընդ կապճի միոյ ցորենոյ՝ եթէ մեծատունք էին, և եթէ աղքատք՝ ընդ դարւոյ, և թաղուցանէին զանձինս ի ներքնատունս իւրեանց: Եւ կէսք ի նոցանէ ի բազում կարօտութենէ զցորեանն ուտէին՝ իբրոք

չէր աղացեալ, և էին որ եփէին, որպէս և հարկ օրինին
 հրամայէր. և սեղան բնաւ ամենեւին ուրեք ոչ ուղղէր, և
 անդատին ի կրակէ անտի յափշտակէին և ուտէին զկերա-
 կուրն. և արտասուաց արժանի էր տեսիլ նորին. և որ
 միանգամ զօրագոյնք էին քան զընկերս իւրեանց, յափշ-
 տակէին զնա, և որ հիւանդոտքն էին, լային և կային:
 Բայց քան զամենայն վիշտս և նեղութիւնս անցեալ զան-
 ցանէր նեղութիւնս սովուռն. իրք որ յալլում վայրի ամօթոյ
 պատկառանաց արժանի են, ի մէջ նորա անարգեալ ար-
 համարէին. զի կանայք յարանց իւրեանց և մանկուքն ի
 հարց իւրեանց, և կորանք քան զամենայն՝ մարք ի բերա-
 նոյ տղայոց իւրեանց յափշտակէին զկերակուրն. և իբրեւ
 սիրելիքն իւրեանց ի ձեռս իւրեանց թառամեալ համա-
 րէին, ոչ անխայէին բառնալ զկայ կենաց նոցա: Թեպէտ
 և այսպէս ուտէին, սակայն թաղչել ոչ կարէին. յամենայն
 տեղիս իսկ հասեալ ժամանէին խռովիչքն՝ անմ իմիք զոր
 յափշտակէին նոքա: Զի յորժամ տեսանէին ուրեք դուրս
 փակեալ՝ նշան էր այս անոցիկ՝ թէ կերակուր ինչ գուցէ
 ի ներքս. երթային և խորտակէին զդուրսն, արտաքուստ
 ի ներքս անկանէին, և հասանէին ունէին զկոկորդս նոցա
 և հանէին զկերակուրն. բայց կլանէին ծերքն՝ որ ժուժ-
 կալէին կերակրոց, և խղէին զգէսս կանանց որ թագուցա-
 նէին ինչ կերակուր. և ոչ գոյր ողորմութիւն ի վերայ
 ալեաց ծերոց և ոչ տղայոց. զի զտղայսն առնուին և նովին
 կերակրոմն կախէին և զարկուցանէին զերկիր: — Սոսկումն
 և դողումն էր և լսելոյ անգամ, զոր ինչ համբերէր մարդ
 ի խոստումն միոյ նկանակի և վասն ամոյ միոյ ալեր զար-
 ւոյ: Իսկ այնոցիկ որ սողէին և ելանէին գաղտուկ ըստ
 պահակապանսն. Հոռոմոց գիշերայն, քաղել իւրեանց խոտ
 ի վայրէ և բանջար, ընդ առաջ լինէին նոցա. և յորժամ
 համարէին եթէ անա ապրեցաք ի թշնամեաց անտի իւրեանց,
 յափշտակէին ի նոցանէ զայն ինչ զոր բերէինն և ինչ ի
 նմանէ ոչ տալին նոցա:

վայրի, փայտ և կերակուր, ոսկի և արծաթ, սղինձ և երկաթ և քար: Մի բոյս բարուց ծննդեան ջրոյ, և ի սմանէ ազդ թռչնոց երկնից, և զօղակաց ծովու, զի զոր օրինակ նոքա ի ջուրս դուզին, սոյնպէս և սոքա ընդ օդս վերացեալ ընդ երկինս թռչին:

Այս ծով մեծ և անդորր, անդ սողունս ոք ոչ գոյ թիւ: Ո՞ կարէ պատմել զձկանցն, որ ի նմա գեղեցկութեամբ զարդարեալ են: Ո՞ կարէ պատմել զմեծամեծ ձկանցն յաղթութիւնս և կամ զերկակենդան շնչաւորացն զզօրութիւնս. զիմորդ կեանք իւրեանց անդ ի ջուրս են և աստ ի ցամաքի: Ո՞ կարէ զծովուն պատմել զխորութիւն անդնդոց, կամ զլայնութիւն տարածման, կամ զանթիւ թիւս ալեացն զմիմեամբք կուտակելոց, սակայն հասեալ ի սահման գետառեալ կայ. որ ընթացեալ ի խորոց անդնդոց անտի ալիօք կուտակելովք, հասեալ ի ծագ և ի դիծ սահմանաց իւրոց՝ անդէն յանձն իւր թուլացեալ լուծանէ զզօրութիւն իւր: Յայտնապէս թողու նշան, պարոյր առեալ զիւրեալ զսահմանս ցամաքին:

Ո՞ կարէ զմտաւ ածել խորհել զբոյս բարուց ծննդեան զօղագնացն թռչնոց. զիմորդ ոմանց ոմանց լեզուքն ճշողք և ճճուողք և կանչողք, և ոմանց ազգի ազգի իրրե նկարք ճարտարաց յերփն երփն փետուրս զարդարեալ են. և զիմորդ ոմանք ճախրեալ ի վեր քան զամենայն հաստատեալ կան ի մէջ օդոյն թռուցեալ: Տարածեալ զթևս իւր՝ հաստատեալ կայ բազէ հայեցեալ ընդ հարաւ: Ո՞ կարէ ի մարդկանէ բարձրացեալ զարծուի թռուցեալ տեսանել ի բարձունս: Ո՞վ է մարդ ի մարդկանէ, որ զամենայն գազանաց զիտէ ասել գոնէ զանուանսն. կամ ո՞ է, որ զմտաւ ածել մարթէ զիւրաքանչիւր նոցա բարուցն բարեգիտութիւն: Զի աղուէսն ցուցանէ զբարս նենգաւոր մարդկան, և օձն յայտ առնէ զբարեկամաց զժանգաւոր զժնդակութիւն, և ժրագլուխ մրջիւնն, զի զարթուցանէ զվատացն զտաղտկութիւն: Զի յորժամ երիտասարդութիւն հեղգութեամբն և տաղտկութեամբն զանգեալ իցէ, յանբան անասնոյ անտի ժրութե-

նէ կշտամբեալ յանդիմանեսցի, որպէս և ասացին զիրք.
«Տես զմըջիւնն, ո՛վ վատ, և նախանձեան ընդ ճանապարհ
նորա, և լեր դու իմաստնագոյն ի ժրութեան»։ Զի իբրեւ
հայիս ընդ նա, որ ի ժամանակի իւրում գանձէ զհամբարս
իւր, նախանձեանց և դու ընդ նմա գանձել և դու քեզ
պտուղ գործոց բարութեան։

(Կիւրդի Կոչումն րեծայուսեան, էջ 151—154).

26.

ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՆԻՆՈՒԷԻ

Յարեաւ թագաւորն և կանայք իւր, և ի բաց եղին
զթագն ի վերայ գլխոյ թագաւորին. զի լուան թէ վաղիւն
չիցեմք։ Ամենայն քաղաքն միաբան գոչեցին. վասն զի ի
գոչել հողմոյն պղտորէր զհող երկրին, զի երկինք խռովեալ
էին. ամպք և մէգք զմիմեամբք պատէին և զօրացեալ
թանձբանայք մառախուղն։ Փայլակն զփայլակն բախէր,
որոտումն որոտման պատահէր, կայծակունք զկայծակունս
ստիպէին. դողումն անդ և հիանալ սրտի։ Ամենայն մարդ
ընդ գետին հայէր, թէ ահաւասիկ տապալի։ Լալին ամե-
նեքեան զմիմեանս ի կատարել աւուրցն։ Եհաս ժամն այն,
կացին ամենեքեան յաստիճան մահու, բուռն հարին զմի-
մեամբք, վասն զի եհաս յուսահատութիւնն։ Եւ ի լալն
իւրեանց հայէին ընդ երեկան, եթէ եկն գիշերս և երեբ
մեզ խաւար անմեկնելի. եկն գիշերս և ահա չիք մեզ տե-
սանել զառաւօտն։ Եւ ասէին՝ թէ յորժամ պահու կործանի.
յերեկորեայ երբեք տապալի, եթէ առաւօտուն կործանի.
յորժամ պահու արդեւք գայ ձայն գուժին։ Կարծէին թէ
յերեկորեայ տապալի. եկն երեկոյն, և նա կայր կանգուն։
Ակն ունէին եթէ ի գիշերի ընկղմեսցի. եղև գիշեր, և նա
կայր ևս տակաւին։ Ակն ունէին եթէ առաւօտուն կործա-
նի. բացաւ առաւօտն, բացաւ ողորմութեան և գթութեան
դուռն ի վերայ քաղաքին. զի յայն աւուրսն երկիրն ի

շարժմանէ ոչ դադարէր: Յայս վեց եօթներորդան երանի
էր մեռելոց՝ քան նոցա: Կենդանի մեռեալ էին, և չէին
թաղեալ: Եղբայր եղբօր պատահէր և ոչ ճանաչէր զկեր-
պարանս նորա. և ոչ ունկն կարաց ի միմեանց մեկնել
զձայն ի ձայնէ: Իբրև զխանձող կրակի էին ի պահոց.
մորթ և ոսկերք լոկ մնացին:

Եփրեմ, Դ. 119.

27.

ՀԱԼԱԾԱՆՔ Ի ՎԵՐԱՅ ԱՍՈՐԻՈՑ

Դանն և անհնարին հրամանն ստիպեալ հասանէր և
սաստիկ սպառնալիք չարաշուկ դատաւորացն դողունն յա-
ճենեսեան արկանէր: Քանզի ամբարիշտք իբրև զբոց հրոյ
բորբոքէին և որդիք կորստեանն որ ուտեն զմիս հում
զկենդանեաց՝ իբրև զգազանս զիշակերս սրէին զատա-
մունս:

Առեւծն ահագին գոչէր և ելանէր ի չարաշուք մոր-
ւոցն՝ յարձակել յափշտակել և բեկանել զեզինս հարկեաց
որոտայր:

Գայլք ապականիչք յիւրաքանչիւր որջից ելանէին՝
հասանել պատրաստականք ապականել զորձս պարարտ խա-
շինն: Աղուէսք ժանտահոտք յիւրաքանչիւր դադարաց ըղ-
ձիկս լինէին՝ դալ կրծել զանկեալ ոսկերս խաշանցն:

Քաջասիրտք և պնդակաղմք պատուի և պսակի հա-
սանէին, և վատասիրտք և տագնապեալք կորուսանէին
զյաղթութիւնն.

Դասակք դասակք օգեաց մտանէին խիղախելով, և
պառակք պառակք աչծեաց ելանէին սևացեալք գունովք
ուրացութեանն: Մտանէին սուրբք և սպիտակք, և ելանէին
աղտեղիք և արիւնոտք: Սատանայ և դևք խնդային ընդ
անհնարին բեկումն մեր, և այսք պիղծք ցնծային ընդ կո-
րուստ ապականութեանն:

Օգը սուգ զգեցեալ բարկութեամբ շնչէին և ի պարզ
չստակութենէն յարամուր և ի մրրիկ դառնային: Քաղցրա-
շունչ հողմն հարաւոյ դառնաշունչ բարկութեամբ կազ եղեալ
ընդ աշխարհիս մարտնչէր: Որոտմունք և անհնարին ճայթ-
մունք առանց անձրևի և ցօղոյ զմիմեանս բախէին և դո-
ղացուցանէին:

Ահեղ փայլատակունք յերաշտից անկանէին ի մար-
դիկ և խարշէին: Մռայլ և ծուխ չարատեսիլ շփոթեալ ընդ
երկինս ընթանայր և փոխանակ ցօղոյ և անձրևի՝ փոշի
ցասմամբ արկանէր յանդաստանս: — Ամալք տմուլք, ան-
ծինք և անորդիք լինէին, զի ոչ ծնան և սնուցին և հա-
սուցին զբոյս ի չափ հասակի:

Ջամենայն աչօք մռայլ մածեալ նստէր ի սովոյ, և
գոյնք ամենեցուն իբրև զճակնդեղ խարշեալ յեղեմանէ:
Մարդք պատուականք առ վտանգի սովոյն զիշամիս ու-
տէին: Կէսք զմիմեանց մարմինս ուտէին և ոչ յագէին:
Կանայք պատուականք և գթածք ընդ իւրեանց ձեռն եփէին
զմանկունս և ուտէին, և դարձեալ ինքեանք զկնի նոցա
մեռանէին չարչարանօք:

Գետք անհունք նուազեցին և եղեն մօտ յազազանել,
քաղաքք բազումք թափուր եղեն և աւերեցան, շէնք թա-
փեցան և աւերակք բազմացան:

Վկայք արեւելից, էջ 40.

28.

ԱՂԵՐՍ ԵՒԹԱՂԻ

Ամենայն իբիք ամենայն ուրեք ժամանակ է: Աճէ
դաչ հասանէ յաստիս և դարձեալ միւսանդամ անդրէն դա-
դարէ: Բայց յաղթողն կարեաց միայն յամենայնի յաղթէ:
Մի լինիր ամբարտաւան, յորժամ ի ցանկալի փառաւորու-
թիւնս իցես, և մի գձու՞ յորժամ ի թշուառութիւն հասա-
նիցես: Զի եթէ այսպէս զկշիռն ունիցիս, արդար կշռիչ

կենաց աշխարհիս լինիցիս. քանզի ոչ ի պարզս և ոչ ի
չյօղուածոյս ի մնասակարութիւնս անկաք, այլ ի բազումս
և յանհնարինս և ի պէսպէս դառնութիւնս, և չիք ոք որ
այնց մխիթար լինիցի մեզ: Յամենայն կարծելոց բարո-
թեանցս միանգամայն վրիպեցաք՝ յաշխարհէ և ի փառաց
և ի մեծութենէ, և միայն օգնական չարեաց զանմտութիւնն
դարի:

Եւ արդ քանզի բազում վշտօք պատեցար, ով անձն
իմ, մի վհատիր յաշխատութիւնս, այլ համբեր, ով սիրելի,
իբրև զլաւ ինչ ածեալ զմտաւ, եթէ ոչ զոր կամի ոք և
խորհի՝ զայն առնէ, այլ զոր ոչն խնդրէ ոք և փախչի՝
զայն կրէ:

Ասաց ոմն, ասաց մեզ այսպէս պուտիկոս գլուխ մի՝
եթէ Յոյսք առ կենդանեօք, անյոյսք մեռանին: Եթէ այն-
պէս իցէ, պարտ է համբերել վշտաց և տանել առաքինու-
թեամբ կարեաց: Զի ոչ ոք է ինչ և չէ ինչ ի կեանս երկ-
րածնաց և ոչինչ ի նմին հաստատութեան իբաց մարդ-
կան կայ, այլ իբրև զանիւ շրջի ամենայն և ընթանայ:

Եւրպ, էջ 209

ՅԵՏ-ՈՍԿԵԴԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ

1.

ՅԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք
և գգուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահա-
ւորակս, հանապաղ բոկ և հետի երթային ի տունս աղօ-
թից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք, զի համբերել կա-
րասցեն մեծի նեղութեանս: Որ ի մանկութենէ իւրեանց
սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք երէոց, խոտա-
բուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մե-
ծաւ խնդութեամբ, և ոչ չիշէին ամենևին զսովորական
փափկութիւնս: Սեպեալ ներկան մորթք մարմնոյ նոցա,
վասն զի ցերեկ արեակէզք էին և զամենայն գիշերսն գետ-
նաբեկք:

Մոռացան զկանացի տկարութիւն և եղեն արուք
առաքինիք ի հոգևոր պատերազմին. մարտ եղեալ կռուե-
ցան ընդ մեղսն կարևորս, հատին կտրեցին և ընկեցին
զմահաբեր արմատս նորա: Միամտութեամբ յաղթեցին
խորամանկութեան, և սուրբ սիրով լուացին զկապուտակ
ներկուածս նախանձուն. հատին զարմատս ազահութեան
և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա:

Այրիք որ ի նոսա էին, եղեն վերստին հարսունք
առաքինութեան և բարձին յանձանց զնախատինս աչրու-

Թեանն: Իսկ կանայք կապելոցն՝ կամօք կապեցին զմարմ-
նաւոր ցանկութիւնս և եղեն կցորդ չարչարանաց սուրբ
կապելոցն. ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատա-
կացն մահուամբ, և ի հեռաստանէ եղեն վարդապետք մխի-
թարիչք բանտարդեւացն: Մատամբք իւրեանց վաստա-
կեցին և կերակրեցան, և զկարգեալ ռոճիկ նոցա յարքու-
նուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի
մխիթարութիւն: Անարիւն ճիպռանց նմանեցին, որ երգոյն
քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի
են միայն զօղն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանու-
թիւն:

Բազում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն
և եկին նորեկ ծիծեռունք. տեսին և խնդացին կենցաղա-
սէր մարդիկ, և նոքա ոչ երբեք կարացին տեսանել զանձ-
կալիսն իւրեանց: Ծաղիկք զարնանայինք յիշատակեցին
զպսակասէր ամուսինն նոցա, և աչք իւրեանց կարօտացան
տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա: Սպառեցան բա-
րակք որսականք և խցեալ կուրացան արշաւանք որսոր-
դաց: Բնադրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տա-
րեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշակատեղս
նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս
յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին
յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի
նոսա:

Եւ իբրեւ այնպէս յամենայն կողմանց ալեկոծ լինէին
միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինու-
թենէն: Արտաքնոցն երեւէին իբրեւ այրիք սգաւորք և չար-
չարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք
երկնաւոր սիրով:

Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստա-
տանէ, եթէ երբ լինիցի մեղ տեսանել զսիրելիսն մեր. այլ
այն էին իղձք աղօթից նոցա, եթէ որպէս սկսանն՝ քաջու-
թեամբ ի նմին կատարեացին լի երկնաւոր սիրով:

Եղիօկ

ՆԿԱՐԱԳԻՐ ԱՅՐԱՐԱՏԱՅ

Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր՝ լքեալ մերժեալ թողոյր զբարի և զբնիկ ժառանգութիւնն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատու, զհոյակապն և զհռչակաւորն և զականաւորն, զամենաբոյսն, զամենաբուղին, զամենալին, զամենագիւտն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և յթափութեան. զդաշտս մեծատարածս և որսալիցս, զլեւինս շուրջանակի գեղեցկանիստս և պարարտարօտս, զհոծեալս եբէովքն կճղակարածն իւրք և որոճայնովքն, և այլովք ևս բազմօք ընդ նոսին: Յորոց ի վերուստ ի կատարացն ջրոց հոսմունք, անկարօտ ոռոգման արբուցանելով զդաշտս՝ մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանումն իւղարուղիս սերմանցն: Իսկ ի լանջակողմանսն կամ ի սարահարթ տեղիս սփռեալ, յոր դիպեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց՝ հանդերձս ինչ և ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն սփռեալքս պարարտարոյսք և պարարտարօտք պարարտահամք. որոց թանձրախիտ աճմունք խոտոցն զանթիւ արօտականս ընտանի իշանց և զանհամբոյր բոյլս վայրենի երէոցն յագեցուցեալ՝ թանձրաթաղանթս, առոգագաւակս, սոնքացեալս գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանեն: Իսկ սաստկարուրումն անուշահոտ ծաղկանցն, որ զարանցն քաջաց որսասէր նետողացն և զհօտարած բացօթէգացն, ընձեռելով առողջութիւն՝ զօրացուցանեն զզգացութիւն խելացն և նորոգեն: Անդ գտանին՝ և ազգի ազգի արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց, ըստ ճարտարագէտ ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուածոցն, երա-

գահաս ախտահալած սպեղանիք, և կամ արբամմբ յերկա-
րելոցն ի ցաւս պատահացուցանեն առողջութիւնս:

Իսկ դաշտացն ամենալրութիւնս դկամս աշխատասի-
րացն կորզելով լինքեանց իբրև բանիւ, և առլցեալ որ դինչ
և է բարով՝ ևս առաւել փութանակի զդարձն առ ինքեանս
հրաւիրեն միանգամայն: Որք ոչ միայն երևելութեամբն
ցուցանեն, վերաբերեալ զշահաւորութիւնս օգտից մարդ-
կան, այլ առաւել յորդորախոյզ աշխատողացն՝ զառ ընդ
երկրաւ ծածկեալ օգուտս ուսուցանեն, դանձել անձանց շահս
և զվալելս ալսր աշխարհիս ի մեծութիւնս թագաւորաց և ի
հաստատութիւնս հարկահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ
և զսլատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձե-
ռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրին-
ուածովքն, զոր ի խոյրսն և ի թագսն և ի հանդերձսն յոս-
կեհոլոս պաճուճեալս ընդելուզանեն: Այլ և մածմամբ ջրոց՝
համածին անուշութիւնս մատուցանեն կերողացն զխորտ-
կացն որոշութիւնս: Նաև զարմատս եղէգնասէր բուսոցն ոչ
ընդունայն սնուցանէ յինքեան ամենարազ՝ դաշտն Այրա-
րատոյ, այլ և ի նմանէ ծնեալ որդունս, ի զարդ կարմրա-
տեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս:
Եւս և գետոցն գնացք բազմակերպ ձկամբք մեծամեծօք և
փոքումբք, զանազանեալ համովք և այլ և այլ տեսովք՝ ուրա-
խացուցեալ լցուցանէ զշնորհս ընչից և յագուրդ որովայ-
նից ժրացելոցն և անվեհեր ջանացողացն:

Սնուցանէ յինքեան երկիրն ջրովք արուեստիւք և
զառաւելութիւնս հաւուցն յուրախութիւնս և ի սթափումն
որսատենչ ազատացն. զկրկջաձայն քաղցրաձայն առադա-
րասէր վիմասոյզ սորամուտ երամս կաքաւացն և սալամ-
բացն, և կամ զեղէգնաբնակ թփամուտ մացառադօղ պա-
րարտամարմին զանուշահամ ազգ աքարացն վայրենեաց.
այլ և զջրասուզակ մամռախնդիր խօզակեր մեծանձունք և
յաղթամարմինք հաւքն, փորն և թանձրն և սագն, և կամ
այլ բազում և անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն շոկք
թռչնոցն: Իսկ թակարդացն շրջափակութեամբք, երազազիւքն

և գահողովքն, ելեալ ի յորս գունդք նախարարացն որդե-
ւովքն ազատացն, ուր ոմանք գհետ ցռուցն և այծեմանցն
ցարշաւելով՝ զխիզախական զաղեղնաձայնն ևեթ բարբառի-
ին. և այլք գհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարձակ
եղեալ՝ զգործ կորովածիգ արանցն ցուցանեն. և կէսք սու-
սերօք իբրև զմենամարտիկս՝ զսասականդամ երամս վա-
րագացն գլորեցուցեալ սպանանեն: Եւ շատք ի մանր ման-
կանց նախարարաց որդւոցն դաստիարակօք և ծառայիւք
զայլևայլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազայիւք՝ դարձեալ
բերիցեն ի յաճումն ընթրեացն ուրախութեան. և այսպէս
առլցեալք իւրաքանչիւր որսով՝ գնան ուրախացեալք:

Ղ. Փարպեցի, էջ 9—11.

3.

ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏ

Քաղցր է ինձ ասել և լաղազս գեղեցիկ դաստակեր-
տին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ
գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին
մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսա-
ւոր որպէս ական բիր. իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղ-
կոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն
զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստա-
նոյ, իբր զարտեանաց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսի-
սային կողմանն գիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կու-
սից յօնից դարեանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հար-
թութիւն դաշտաց, ծնօտից պարզութեան գեղեցկութիւն.
Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ամանցն՝ զերկթեր-
թիսն նշանակէ շրթունս: Եւ այսպիսի գեղեցկութեան գիր
անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն
զհայեցուածսն ունի. և արդարև բերրի և թագաւորական
դաստակերտն:

Խորենացի, Բ. 42.

ՎԱՍՆ ԿՈՏՈՐԱՆԻՆ ՈՐ Ի ՍՄԲԱՏԱԲԵՐԴ

Անդ էր տեսանել տեսութիւնն ողորմելի և բազում ողորոց արժանի. զի զոմանս ի նոցանէ որ ի բռնն անկանէին, սրամահ սպանանէին. և որք յառապար տեղիս անկանէին և ամրանային, նետիւք խոցոտեալ սատակէին. և զբազումս յանձաւին վերայ ելեալք մեծամեծ վիմօք զլաջարդ առնէին, որոց դիակունքն զլաթաւալ ի վերայ միմեանց շեղջեալ իբրև զկոյտս փայտահարաց՝ դառաջիկայ զձորն լնուին: Վայ և աւաղ շատ դառն լուսոյ աւուրն այնորիկ. զի քաջ արքն վառեալ զինու և սրամտութեամբ եռացեալք, և վատքն թալկանային, կանացիք յիմարէին և երիտասարդք խիղախէին, այլ ելս իրացն ոչ կարէին իմանալ: Քանզի յամենայն կողմանց պատնէշ թշնամեացն պաշարեալ էր զնոսա. ոչ գոյր անդ սէր սիրելեաց և ոչ աւաղ բարեկամաց. մոռացաւ հայր զգոլթ որդւոց, և մայր զսէր նորածին մանկանց: Ոչ կարէր չիղել անդ կին նորահարսն զսէրն փեսայի, և ոչ զմտաւ ամէր այր զգեղ ցանկալի ամուսնոյն իւրոյ. պակասեցան երգք պաշտօնէից, և հատան ձայնք սաղմոսաց ի շրթանց սաղմոսողաց. կալաւ առ հասարակ դամենեան զողումն և երկիւղ: Եւ ի սաստիկ տագնապէն, բազում կանայք յղի գոլով՝ վիժէին զմանկունս. և այսպիսօրէն գործով՝ իբր վարմաւ որսորդաց թակարդեալ էին զլեռն ամենայն մինչև լքան և հատան ի զօրութենէ:

Իսկ ի գալ երեկոյին, առեալ զառ և զգերի և զկապուտ սպանելոցն, չոգան ի տեղւոյն: Իսկ զկնի ելանելոյն նոցա, անդ էր տեսանել տեսութիւնն ողորմելի և քան զառաջինն ողորմագոյն և բազում ողորոց արժանի: Քանզի բազմադիմի էին օրհասք մահուն. զի ոմանք յանկելոցն դեռ յոգիս կէին և լեզուք նոցա ի ծարաւոյ ցամաքեալք,

նեղ և նուրբ ձայնիւ հայցէին հայթայթանս ծարաւոյն
 գտանել, և ոչ ոք էր որ տայր. իսկ կէսք չարապէս վիրա-
 ւորեալք, և ի ձայնէ պակասեալք, ուժգնակի շնչէին. և
 այլք ընդ փողիցն զենեալք՝ կիսամեռ գոլով, դժուարաւ
 խոնչէին. իսկ ոմանք ի դժուարին խոցուածոցն մարման-
 ջեալք՝ աքսոտէին ոտիւք, և եղնգամբ ձեռացն զերկիր դափր
 հատանէին: Բայց առ նոսա և այլ ահագին էր տեսիլ տե-
 սանել, որ և զքարինս անգամ և զայլ անշունչ արարածս
 շարժէին ի յողբս և ի հառաչանս. քանզի անօրէնքն յոր-
 ժամ զգերիսն հանին ի լեռնէն, զտղայս առեալ ի զրկաց
 ծնողացն՝ յերկիր ընկեցին, որովք ի բազմութենէ նոցա
 եռայր առհասարակ տեղի բանակի նոցա: Ոմանք յանկե-
 լոցն զքարի հարեալ սատակէին, և կիսոց կուշտքն պա-
 տառեալ, և փորոտիքն յերկիր հեղեալ. իսկ զկենդանեացն
 զկառաչ որ լսելիք տանել կարէին: Քանզի որ հետիոտիւք
 ընթանալ կարէին, այսր անդր յածելով զմօրս իւրեանց
 խնդրէին, յորոց ի բարձրաձայնութենէ լալեացն՝ արձա-
 գանգ լերինն զհետ հնչէին. իսկ այլք որք չև ևս էին հաս-
 տատեալք յոտս, ի գուճս սողալով կառաչէին. իսկ որք
 քան զնոսա ի տխեղծ հասակին, ոտիւք զերկիր հարկանէին.
 և ի սողալոյն պակասեալք ի ձայնս, ոչ կարէին արտաքս
 բերել զհագագն, և այսպիսի ողորմագին ձայնիւք և ան-
 հատ աղաղակաւ՝ զգառանց բերէին զնմանութիւն, որ դե-
 ոադեռ ի մարցն բաժանեալ՝ ի հորձիցն ելևելս առնէին
 վասն անժոյժ գոլոյ բնութեանն. և անգաղար զօղանջիւք
 վիրաւորէին զօգն, և ձանձրացուցանէին զլսելիս լսողացն:

Լասիվերցի, էջ 50—51.

5.

Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ՍՍՏՈՒԾՈՅ

Ձայն հառաչանաց հեծութեան սրտի՝ ողբոց աղաղա-
 կի քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց, և մատուցեալ

եղեալ ի հուր թախծութեան անձին տոչորման՝ զպատուղ
ըղծից ճենճերոյ սասանեալ մտացս, բուրվառաւ կամացս
առաքել առ քեզ: Այլ հոտոտեսցիս, հայեսցիս, գթած, քան
ի սլառարագն բոլորապատուղ մատուցեալ ծխոյն բարդու-
թեան: Ընկալ զսակաւամասնեայ բանիցս յօդուած քեզ ի
հաճութիւն և մի ի բարկութիւն:

Այն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք
յոյժ նմանագոյն. լորում կոհակօք բազմօք անթիւ դիմեց-
մանց տատանեալ հոգիս ի յայսմ աշխարհի մարմնոյս շին-
ուածով իբր ի նաւակի: Քանզի մինչդեռ չուէի ես յանհո-
գութեան անտարակոյսն վստահութեամբ, դոյզն կասկած
արկածից ի միտ բերելով առ խտրոց փոքր միջոցին, որ ի
մէջ հանգստեանն և աշխատութեանն, իբր այն թէ հասեալ
իցեմ, ձմեռն յամարանի բքաբեր հողմով ժամանեալ երեք-
ալեանն դիմակցութեամբ ամբոխեաց զհանդարտութիւնն:
Ուստի նաւն ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ:
Թևոցն ձեռնարկութիւն քալքայեցաւ, կայմն ամբարձման
ի կաշից իւրոց խլեցաւ, առադաստին թռչարան յանկար-
կատելի ծուէնս պատառեցաւ, շինուածոյն շուք անզարդե-
ցաւ, առասանք ձգողականացն խղեցաւ, տեսարան գլխոյն
դիտակի խոնարհեցաւ, ապաւանդակին պարան կտրեցաւ,
ապաւինութիւն խարսխին լուծաւ, լուծք ստուարք ամո-
լիցն կցորդութեան բաժանեցան, սամիք ուղղչացն հետոց
գալարեցան, լաստ հիմանն հաստարանի ընկղմեցաւ, դե-
կացն կառուցմունք անդրէն սուզան, չուոցն լարմարու-
թիւնք պակասեցան, ողնափալտին պատսպարան իսկոյն
բեկաւ, կապարանք դստին հաստուածոյ լօշատեցաւ, գոգք
ամփոփման ծոցոյն կաղմածոյ անարդեցան, խելք շրթանցն
եղերաց խախտեալ ոստեաւ, պաղպաջունք բաղմականացն
անկեալ բարձաւ, վանդակապատին վայելչութիւն յատա-
կեցաւ, գահաւորակին հանգստարանն շփոթեցաւ, մածմունք
տախտակաշարք ի միաբանութեանց միմեանց անշատե-
ցան, հեղոյսք պնդման բեռացն քարշեցան: Արդասիք

իրին լիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ: Նաւուդիդն
հանդէպ նաւին դեգերեալ ողբայ, ձեռն ի ծնօտի եղեալ
արտասուաց գետս իջուցանէ: Նշմարք սակաւ մնացուածոցն
ի ծայրից ծփմանց ազդելոյ ծովուն, իբր խողխողեալ բա-
նաւոր, ողորմագին թախծանօք հեծէ:

Գր. Նարեկացի, 1, 25.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0012740

A 13518

(1)